Azg
Azg armenian daily

18 ՅՈՒԼԻՍ 2003 ՈՒՐԲԱԹ 136 (2821)

ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ ՀԱՄԱՐ

Քոլին Փաուելն Աբդուլլահ Գյուլի հետ կխնարկի նաեւ Հայաստան-Թուրքիա հարաբերությունների հարցը

Ինչպես տեղեկացրել էինք նախորդ համարում, հուլիսի 22-ին Թուրքիայի արտգործնախարար Աբդուլլահ Գյուլը պաշտոնական այցով մեկնում է Վաշինգտոն: Թուրք-ամերիկյան հարաբերությունների սրման ֆոնին պաշտոնական Անկարան չափազանց կարեւոր նշանակություն է տալիս նրա այցին: Դա թուրքական զանգվածային լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում է նաեւ: Այցն, ըստ երեւույթին, որոշակի նշանակություն կունենա մեր հանրապետության համար: Հուլիսի 17-ի առավոտյան թուրքական հանրային հեռուստատեսությունը տեղեկացրեց, որ ԱՄՆ պետքարտուղար Փաուելը Գյուլի հետ հանդիպմանը պատրաստվում է քննարկել նաեւ Թուրքիա-Հայաստան հարաբերություններին առնչվող մի շարք խնդիրներ:

Ինչպես հայտնի է, պաշտոնական Վաշինգտոնը վերջին շրջանում առանձնակի ուշադրություն է դարձնում հայ-թուրքական հարաբերությունների խնդրին, մասնավորապես սահմանների վերաբացմանը, իսկ Անկարան մեծ շահագրգռվածությամբ հետեւում ու խանգարում է Կոնգրեսում Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացին:

Փաուել-Գյուլ հանդիպումը, նույն աղբյուրի վկայությամբ, տեղի կունենա հուլիսի 24-ին:

Հ. Ց.

Ռոբերտ Քոչարյանը հանդիպեց Ֆրանսիայի Ազգային ժողովի նախագահ Ժան Լուի Դեբրեի հետ

ՓԱՐԻԶ, 17 ՅՈՒԼԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը Ֆրանսիա կատարած իր աշխատանքային այցի շրջանակներում այսօր հանդիպեց Ֆրանսիայի Ազգային ժողովի նախագահ Ժան Լուի Դեբրեի հետ: Հանդիպման ընթացքում կողմերը շոշափել են Հայաստանում ժողովրդավարացման գործընթացներին, տնտեսական բարեփոխումներին եւ տարածաշրջանային զարգացումներին վերաբերող հարցեր:

Ֆրանսիայի Ազգ նախագահը մեծ ուշադրություն է դարձրել Սահմանադրության բարեփոխման խնդրին: Ռ. Քոչարյանը հայտարարել է ժողովրդավարական ու սահմանադրական բարեփոխումները շարունակելու Երեւանի պատրաստակամության մասին: Նա հավաստիացրել է, որ Եվրախորհրդի առջեւ Հայաստանի ստանձնած պարտավորությունների կատարումը օրակարգում է, եւ որ Ազգայի խմբի հետ ձեռք բերված պայմանավորվածությունները կիրականացվեն:

Տնտեսական բարեփոխումների առումով նշվել է, որ Առեւտրի համաշխարհային կազմակերպությանն անդամակցելուց հետո Հայաստանում սկսել են գործել եվրոպայի համար բնորոշ առեւտրային ռեժիմները: Ֆրանսիական կողմը գոհունակությամբ է ընդունել այն իրողությունը, որ ՀՀ առեւտրային ռեժիմն ամենաազատականներից մեկն է աշխարհում:

Կողմերը քննարկել են նաեւ իրադրությունը հարավկովկասյան տարածաշրջանում: Հանրապետության նախագահը ներկայացրել է Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացի ներկա վիճակն ու գոհունակություն է հայտնել ԵԱՀԿ Մինսկի խմբում Ֆրանսիայի դերի կարեւորությամբ, նշելով, որ պաշտոնական Փարիզը միշտ մեծ ջանքեր է գործադրում խնդրի լուծմանը հասնելու համար: Ռոբերտ Քոչարյանն ու Ժան Լուի Դեբրեն շոշափել են նաեւ հարեւանների հետ հարաբերությունների թեման: Նշվել է, որ զարգացում ակնկալելու համար Կովկասին անհրաժեշտ է կայունություն եւ խաղաղություն:

Հանդիպման ավարտից հետո նախագահին այցելեց Մաշինյոն պատկերասրահ, ուր գտնվում է ֆրանսահայ մեծանուն նկարիչ Ժանսեմի (Հովհաննես Սեմերջյան) գործերի մշտական ցուցահանդեսը: Նշենք, որ վարպետը Հայաստանին է նվիրում 400 վիմագրեր:

Ապա հանրապետության ղեկավարն այցելեց եւ ծաղկեպսակ դրեց Փարիզի կենտրոնում կանգնեցված Կոմիտասի արձանին, որը խորհրդանշում է Ցեղասպանության զոհերի հիշատակը: Նախագահի խոսքերով, դա բարոյական պարտք է, ինքը չէր կարող լինել Փարիզում եւ չայցելել այս վայր:

ՕՐԱԽՆԴԻՐ

Ինտերնետն էլ կարող է պատռնալ մեզ, եթե...

Ինտերնետը լինելով տեղեկատվության հզոր աղբյուր՝ փոխարինում է աշխարհն այնքան, որ հնարավոր են դառնում մարդկային անհերեւակայելի արարքներն անգամ: Հիվանդագին մտածողությամբ մարդկանց համար, ինտերնետը, ցավոք հաճախ դառնում է պոռնոգրաֆիայի միջոց: Հայաստանում թերթերի եւ ֆիլմերի վրա օրենքով հսկողություն է դրված եւ դրա դեմ կարծես թե բողոքներ չկան: Սակայն ինտերնետն առայժմ մնում է բաց ու վտանգավոր հասկացություն անչափահասների համար: Ավանդական հայկական միջավայրին ավելացել են համակարգչային եւ ինտերնետային միջավայրերը, որոնցում արգելված չէ պոռնոգրաֆիան, մինչեւ անգամ՝ շուրջօրյա:

Որքանով է դրա ազատությունը համապատասխանում օրենքի պահանջներին, երբ գործող օրենքը չի կարգավորում ինտերնետային եւ համակարգչային միջավայրում պոռնոգրաֆիկ երեւույթների առկայությունը: Հասկանալի է, որ օրենսդրական դաշտի կարգավորման հարց է առաջանում: Եթե գործող օրենքը տարածվեր այդ միջավայրի վրա, ապա հարցը կվերահսկվեր: Անշուշտ, պետությունը պետք է այս հարցը հիմնովին կարգավորի՝ հաշվի առնելով դրա թե բարոյական հետեւանքները, թե բացասական ազդեցությունը մեր հասարակության առողջ կենսակերպի եւ հոգեբանության վրա: Այս հարցը ուշ թե շուտ պիտի կարգավորվի, ուրեմն, մասնագետների կարծիքը հաշվի առնելով՝ Հայաստանի ինտերնետ պրովայդերներին օրենքով պետք է պարտադրել, որ պոռնոգրաֆիկ սայթերից օգտվելը հնարավոր լինի միայն կեսգիշերից հետո: Իհարկե, նման սահմանափակումները գուցե ազդեն պրովայդերների եւ խաղում անընդհատ աճող ինտերնետային ծառայությունների բիզնեսի վրա, սակայն պետք է հասկանանք, որ գործ ունենք ազգի բարոյականության ու առողջության հետ: Հակառակ դեպքում, ամերիկյան եւ ռուսական հանցագործ խմբերի հետ համագործակցող ու մանկական պոռնոգրաֆիկ ֆիլմեր տարածող հայաստանցիների թիվը (տես էջ 3) կավելանա եւ կունենանք բարոյազուրկ ու հիվանդ հասարակություն՝ ընդունակ ամենապիղծ ու զզվելի արարքների:

«Ազգի» նախորդ համարում անդրադարձել էինք 12-ամյա անգլուհու եւ 31-ամյա ֆրանսիացու ինտերնետային ծանոթության պատմությանը: Աղջկա քույրն արարքը վշտացրեց ծնողներին, իսկ ամերիկյան եւ եվրոպական լրատվամիջոցներին առիթ տվեց լայն քննարկման թեմա դարձնելու ինտերնետից օգտվելու անչափահասների իրավունքները: Արեւմուտքում այս խնդրով զբաղվող խորհրդատուների կարծիքով, անչափահասներին պետք է հսկողության տակ առնել ինտերնետից օգտվելիս, արգելել անծանոթ սայթեր ու նամակներ բացել, որոնք նաեւ վիրուսների աղբյուր են:

Իսկ վերջին դեպքի կապակցությամբ առաջացել է հարց՝ ո՞վ է պատասխանատու անչափահասների հետ կատարվող նման դեպքերի համար՝ ծնողները, ուսուցիչները, պրովայդերները, թե՞ պետությունը: Մեր կարծիքով՝ բոլորը:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Հավլաբարի հայկական թաղամասի մոտ սպանվել է Հակոբ Հարությունովը

Չորեքշաբթի օրը Թբիլիսիի Հավլաբար թաղամասում՝ հայկական թաղամասի մոտ, սպանվել է «Վրացավիասերվիս» ավիաընկերության փոխնախագահ, 52-ամյա Հակոբ Հարությունովը:

«Վրացավիասերվիսի» մամլո ծառայությունից **«Ազգը»** տեղեկացավ, որ մարդասպանները Հարությունովին սպանել են կողոպտելու նպատակով: Երբ Հարությունովը դուրս է եկել տնից եւ տեղավորվել իր մերենայի մեջ, մարդասպանները կրակ են բացել, ապա մեքենան տարել Խոջիվանքի (այժմ կոչվում է Էլիա թաղամաս) ուղղությամբ:

Դեպքը հետաքննող Իսանի-Սամգորիի ոստիկանության բաժանմունքը դեռեւս չի բացահայտել եւ ձերբակալել մարդասպաններին:

«Վրացավիասերվիսը» փոքր ավիաընկերություն է, հիմնադրվել է 1998-ին, չվերթեր է իրականացնում դեպի Իրան, Կիպրոս եւ Ուկրաինա:

Անցյալ տարվա նոյեմբերին Թբիլիսիում սպանվել էր վրացական առաջատար ավիաընկերության՝ «Արիզենայի» փոխնախագահ Կախա Ասաթիանին:

Թբիլիսիում բրեածին իրավիճակը հասնում է վտանգավոր սահմանների: Առավել հաճախակի են դառնում սպանության, կողոպուտի, առեւանգման դեպքերը Վրաստանի մայրաքաղաքում, թեեւ Թբիլիսիի փողոցներում ամենուր զինված ավտոմատավորներ են՝ ՆԳՆ ներքին զորքերի ծառայողներ:

Մեկ ուշագրավ փաստ. Վրաստանի բանակում ծառայում է ոչ ավելի, քան 20 հազար մարդ, մինչդեռ ՆԳՆ համակարգում աշխատողների թիվը 76 հազար է:

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ
Թբիլիսի

Ալիեւի տրամադրությունը լավ է

ԲԱՔՈՒ, 17 ՅՈՒԼԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Անկարայի «Գյուլհանե» ռազմաբժշկական ակադեմիայում Ադրբեջանի նախագահի բուժզննումը կավարտվի մոտ ժամանակներս: Այդ մասին այսօր ազգային հեռուստատեսությանը տված հարցազրույցում հայտնել է Թուրքիայում Ադրբեջանի դեսպան Մամեդ Ալիեւը: Նա նշել է, որ «Հեյդար Ալիեւի առողջական վիճակն ու տրամադրությունը լավ է»: «Նախագահը հանդիպում է ունեցել ռեազմաբժշկական ակադեմիայի ղեկավարության հետ, որը նրան շնորհավորել է խաղաղական գործունեության 34-ամյակի առթիվ»,-ասել է դիվանագետը: 1969 թվականի հուլիսի 14-ին Հեյդար Ալիեւն ընտրվել է Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար եւ այդ ժամանակվանից ղեկավարում է հանրապետությունը, որն ընդմիջվել է 1982 թվականի վերջից մինչեւ 1993 թվականի հունիսը: Դեսպանի ասելով, այդ առիթով նախագահ Ալիեւը բազմաթիվ շնորհավորական հեռագրեր է ստացել: Նա նաեւ հայտնել է, որ մոտ ժամանակներս Ադրբեջանի նախագահը մի շարք պաշտոնական հանդիպումներ կանցկացնի Թուրքիայի ղեկավարության հետ եւ դրանից հետո կվերադառնա հայրենիք: 80-ամյա Հեյդար Ալիեւը «Գյուլհանեում» հետազոտվում է հուլիսի 8-ից:

Մութալիբովին չեն ուզում գրանցել

ԲԱՔՈՒ, 17 ՅՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: Թեեւ Այազ Մութալիբովին տարող «Հիլասքյար» («Փրկիչ») նախաձեռնող խմբի ներկայացրած փաստաթղթերն ընդունել է ԿԸՀ-ն, նախկին նախագահի թեկնածությունը չի գրանցվի: Ինչպես հայտնի է դարձել «էմ Փի էյ»-ին լավատեղյակ աղբյուրներից, հրահանգված է փաստեր եւ փաստարկներ հավաքել ընդդեմ Մութալիբովի գրանցման: Իշխանություններին դուր չի եկել նախաձեռնող խմբի անվանումն ինքնին: Աղբյուրի տեղեկություններով, անհրաժեշտ փաստարկներ գտնվել են: Այսպես, գրանցման օգտին չի վկայում այն փաստը, որ Մութալիբովը Ադրբեջանում չի ապրել տասը տարուց ավելի, որոշակի պարտավորություններ ունի ռուսական իշխանությունների հանդեպ, նրա դեմ հարուցված է քրեական գործ իշխանությունն ապօրինի զավթելու մեղադրանքով:

Ինչպիսի՞ն կլինի «Կասկադի» վերջնական տեսքը



ARMENPRESS

Եթե ամեն ինչ բարեհաջող ընթանա, 2006 թ. նախատեսվում է ավարտին հասցնել «Ջերալդ Լ. Գաֆեսճեանի ժամանակակից արվեստի թանգարանի»՝ 25 մլն դոլար արժողությամբ մշակութային ճարտարապետական կառույցի շինարարական աշխատանքները: Մշակութային այս խոշոր համալիրը, ըստ նախնական հաշվումների, հավակնություն ունի դասվելու համաշխարհային ժամանակակից արվեստի թանգարանների շարքում, ինչպես ներկայացվող արվեստի նմուշների (Պիկասո, Մարկ Շագալ, Արշիլ Գորկի, Ժան Դյուֆի եւ այլք), այնպես եւ կառույցի ներքին ու արտաքին ճարտարապետական տեսքի առումով:

Տարիների ընթացքում ամերիկահայ խոշոր գործարար եւ ազգային բարերար Ջ. Գաֆեսճյանի ձեռք բերած արվեստի բացառիկ բնօրինակ ստեղծագործությունների հավաքածուն վերջնականապես կհանգրվանի Երեւանի կենտրոնում՝ «Կասկադ» համալիրի տարածքում: Այդ տարածքը (շուրջ 1 հա) 2002 թ. ապրիլին ՀՀ կառավարության որոշումով հանձնվել է «Գաֆեսճեան հիմնադրամին»: Այդ ժամանակահատվածում հիմնադրամը կատարել է ինչպես շրջակայքի բարեկարգման, այնպես էլ ներքին եւ արտաքին հարդարանքների հետ կապված աշխատանքներ՝ շարժասանդուղքների հետ կապված անվճար գործարկում, կասկադի վերին՝ անավարտ հատվածի բարեկարգում, առանձին արտեզյան հորի փորում՝ շատրվանների եւ ոռոգման համար, էլեկտրական ենթակայանի վերազինում եւ վերակառուցում, «Կասկադի» երկայնքով ցանված ծաղիկներ եւ մշտադալար դեկորատիվ բույսեր, գործող շատրվաններ, վերականգնած մի քանի ցուցասրահներ եւ այլն: Այս շարքում առանձնանում է հիմնադրամի իրականացրած առաջին մշակութային ծեռնարկը՝ «Կասկադի» պուրակում Ֆերնանդո Բոթերոյի «Կատու» մոնումենտալ արձանի տեղադրումը:

Տես էջ 6

Ընթացիկ

Էթնիկ խճանկար, օրենսդիր դաշտ, եվրոպական չափորոշիչներ

Ազգային փոքրամասնությունների խնդիրների հետ...

Թեպետ ազգային փոքրամասնությունները կազմում են Հայաստանի բնակչության ընդամենը 3 տոկոսը, սակայն նրանք էլ ունեն իրենց խնդիրները, որոնց մասին ժամանակ առ ժամանակ խոսվում է հրապարակով: Խորհրդային տարիներին պատկերն այլ էր. նրանք ապրում էին մի տեսակ միաձույլ մեր հասարակությանը, հաճախ նույնիսկ չընդգծելով իրենց ազգային պատկանելությունը: Հայաստանի անկախությունը ինքնուրույն ու անկախ դարձրեց նաեւ նրանց, եւ այսօր, երբ Հայաստանը ունի որոշակի պարտավորություններ Եվրախորհրդի առաջ, առաջնային հարցերից մեկը դարձել է ազգային փոքրամասնությունների իրավունքների օրենսդրական ճանաչումը:

Հայաստանում կան եզդիական, քրդական, հրեական, ռուսական, ասորական, գերմանական, հունական, ուկրաինական, բելառուսական, լեհական, վրացական համայնքներ, որոնց գլխավոր պահանջը մեր կառավարությունից առայժմ մեկն է՝ ընդունել ազգային փոքրամասնությունների օրենք:

Հենց այս նպատակով էլ Եվրախորհրդի «Վստահության կայացման միջոցներ» ծրագրի օժանդակությամբ «Ռազմավարական ու ազգային հետազոտությունների կենտրոնը» երեկ «Հրազդան» հյուրանոցում անցկացրեց «Ազգային փոքրամասնությունների իրավունքները Հայաստանում. ՀՀ հեռանկարները Եվրախորհրդին անդամակցելուց հետո» անդրանիկ սեմինարը: Լսվեցին 3 հիմնական զեկույցներ «Էթնիկ փոքրամասնությունների խճանկարը Հայաստանում. հիմնախնդիրներ եւ լուծումներ» (զեկ. Հրանուշ Խառատյան), «Ազգային փոքրամասնությունների իրավունքների վերաբերյալ ՀՀ սահմանած պարտավորությունները» (Աժ պատգամավոր Վազգեն Խաչիկյան), «Եվրոպական չափորոշիչները եւ հայկականությունը ազգային փոքրամասնությունների իրավունքները պաշտպանելու հարցում» (Մարա Սահակյան):

Համայնքների ղեկավարների պահանջից բխող երկրորդ զեկուցողի թեման բուռն հարցադրումների ու առաջարկությունների տեղիք տվեց: Մասնավորապես կառավարությանը կից ազգային փոքրամասնությունների խնդիրներով զբաղվող հանձնախումբ ստեղծելու առաջարկի վերաբերյալ պրն Խաչիկյանն ասաց, որ նման կառույց ստեղծելու հարցը քննարկման փուլում է: Օրենսդրական դաշտի անկատարությունը մատնանշելով նա հայտնեց, որ ազգային փոքրամասնությունների մասին նոր օրենք է մշակվում, որը մանրամասն քննարկման կդրվի Աժ աշնանային նստաշրջանում:

Համայնքներին հնարավորություն է տրվում հանդես գալու առաջարկներով ու նախագծերով: Հրեական համայնքի ռաբբին առաջարկեց, որ ավելի նպատակահարմար է համայնքների ղեկավարների մասնակցությունը օրենքի նախագծի քննարկման ժամանակ:

Քրդական համայնքի ներկայացուցիչ Կնյազ Հասանովն էլ հիշեց խորհրդային տարիների իրենց համար այնքան երանելի ժամանակները, երբ Հայաստանում կար քուրդ փոխնախարար, տպագրվում էին քրդերեն դասագրքեր, «Ռյա թազա» թերթն էլ այսօրվա պես փակվելու եզրին չէր եւ այլն...

Ուկրաինական համայնքի ղեկավար Օլգա Պարխոմենկոն էլ լրագրողների հետ ճեպազրույցում դժգոհեց, թե կառավարությունը հսկայ քաղաքականություն չի վարում ազգային փոքրամասնությունների հարցում, մինչդեռ իրենք մեծ ցանկություն ունեն Հայաստանում ուկրաինական մշակույթը զարգացնելու:

ՀԺԿ լրատվական ծառայության պետ Ռուզան Խաչատրյանը եւս անմասն չմնաց քննադատական խոսք ասելուց, հավելելով, որ մեզանում ոտնահարվում են քաղաքական փոքրամասնությունների իրավունքները, ուր մնաց թե պաշտպանվեն ազգային փոքրամասնություններինը:

Համայնքների ղեկավարներն, այդուհանդերձ, լիահույս են, որ նախագահի խորհրդական Ռազմիկ Դավոյանի հետ առաջիկայում կայանալիք հանդիպման ժամանակ կսպասեն իրենց հուզող հարցերի պատասխանները:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Ճահագործման հանձնվեց ԼՂՀ Մարտակերտի շրջանի Վանք գյուղի գազամատակարարման ներքին ցանցը



Օրերս ԼՂՀ Մարտակերտի շրջանի Վանք գյուղում հանդիսավոր պայմաններում շահագործման հանձնվեց գազամատակարարման ներքին ցանցը: Ծրագիրն իրականացվել է Կանադայի Տորոնտո քաղաքի հայության նվիրաբերած միջոցներով: Սա գազաֆիկացման բնագավառում կանադահայերի ֆինանսավորած երկրորդ ծրագիրն է: Անցած տարի նրանց նվիրատվությունների շնորհիվ կառուցվեց Մարտակերտի շրջանի Ծմակահող, Առաջածոր, Շահմատուր եւ Վանք գյուղերը սնուցող գազամուղը:

Նշված գյուղերում նախկինում երբեւէ գազ չի եղել: Գյուղացիները վառելիքը հայթայթել են մոտակա անտառներից: Գազաֆիկացման այս երկու ծրագրերը կարեւոր են ոչ միայն բնակիչների կենցաղային պայմանների բարելավման, այլեւ բնապահպանության տեսակետից:

«Հայաստան» Համահայկական հիմնադրամի ստեղծումից ի վեր կանադահայությունը մեծ նշանակություն ունեցող ծրագրեր է իրականացրել Լեռնային Ղարաբաղում: Մասնավորապես՝ կանադահայերի նվիրատվություններով են կառուցվել «Բալուջա-Ստեփանակերտ» ջրագիծը, Ստեփանակերտի ջրամատակարարման օղակաձեւ համակարգը, Նոր, Վերին Սգնեմ, Ներքին Սգնեմ, Գիշի, Խնածախ գյուղերի ջրագծերը: Կանադահայերը մասնակցել են նաեւ Ստեփանակերտի ֆիզիկամաթեմատիկական գիշերօթիկ դպրոցի շինարարության ծրագրին, համակարգչային դասարաններ ստեղծել այդ եւ Մարտակերտի N 2 դպրոցում:

«Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր վարչություն

ԱՆՑՈՒՂԱՐԹ

Հուլիսի 20-ին 16.5 հազար դիմորդներ կմասնակցեն բուհերի ընդունելություններին

ԵՐԵՎԱՆ, 17 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հուլիսի 20-ին Հայաստանի բուհերում կմեկնարկեն ընդունելության քննությունները, որոնց կմասնակցեն 16 հազար 495 դիմորդներ: Ինչպես հայտնեց հանրապետական ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղար Վաղարշակ Խաչատրյանը, 12 հազար 345 դիմորդ քննություններ կհանձնի կենտրոնացված կարգով, 1350-ը դիմել են արվեստի եւ ֆիզիկական կուլտուրայի բուհեր, 2800-ը մարզերի դիմորդներն են:

Ըստ Վ. Խաչատրյանի, այս տարի եւս դիմորդների քանակով առջեւում է երեւանի պետական համալսարանը՝ 3848: Մայր բուհն իր առաջնայնությունը պահպանել է նաեւ մեդալակիր դիմորդների առումով. 113 մեդալակիրներից 64-ը դիմել են ԵՊՀ, 24-ը՝ երեւանի տնտեսագիտական համալսարան, 11-ը՝ երեւանի պետական բժշկական համալսարան, 1-ը՝ Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան, 1-ը՝ Հայկական պետական մանկավարժական համալսարան, իսկ մնացածը բաշխվել են արվեստի եւ մարզերի բուհերի վրա:

Պատասխանատու քարտուղարի խոսքերով, ամենաշատ թվով՝ 400 դիմորդ է գրանցվել ԵՊԲՀ բուժական գործ մասնագիտության, այնուհետեւ՝ ԵՊՀ կիրառական մաթեմատիկա եւ ինֆորմատիկա ու հայոց լեզու եւ գրականություն մասնագիտությունների՝ 350-ական դիմում, ապա նաեւ իրավագիտություն եւ տեսական տնտեսագիտություն մասնագիտությունների գծով՝ համապատասխանաբար 292 եւ 259 դիմում:

Առաջիկա օրերին սպասվում են տեղումներ

ԵՐԵՎԱՆ, 17 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հայաստանի տարածքում՝ հատկապես հյուսիսային շրջաններում, առաջիկա օրերին սպասվում են տեղումներ, կդիտվի քամու ուժգնացում եւ ամպրոպ, տեղ-տեղ նույնիսկ կարկուտ, իսկ հուլիսի 20-ից կլինի առավելապես առանց տեղումների եղանակ: Ինչպես հայտնեցին «Հայհիդրոմետ» վարչության օդերեւութաբանական կանխատեսումների բաժնից, այդ օրերին օդի ջերմաստիճանը 1-2 աստիճանով կնվազի, իսկ հուլիսի 22-ից նույնքան կբարձրանա:

Ընտանեկան բժշկություն. վա՞ղ է, թե՞ ուշ

Հուլիսի 17-ին Հայաստանի ամերիկյան համալսարանում առաջատար մասնագետների մասնակցությամբ տեղի ունեցավ խորհրդակցություն՝ «Ընտանեկան բժշկության ներդրումը Հայաստանում. վա՞ղ է, թե՞ ուշ»: Խորհրդակցությունը վարեց ՀԱՀ/ԱՆ առողջապահության կառավարման եւ կազմակերպման ծրագրի ղեկավար Միհրան Նազարեթյանը:

Սեմինարի մասնակից, ՀՀ առողջապահության նախարարության առաջնային բուժօգնության բաժնի պետ Ռուզան Յուզբաշյանը նշեց, որ Հայաստանում բժշկության բնագավառում նորամուծություններ կատարելու գաղափարը կար դեռեւս 90-ականների սկզբներից: Ժամանակի դժվարությունները թույլ չտվեցին իրականացնել այդ տարիներին, բայց 1996 թ.-ից ի հայտ եկան բարեփոխումների ծիլերը:

Առողջապահության ազգային ինստիտուտի ընտանեկան բժշկության ամբիոնի վարիչ Սամվել Հովհաննիսյանն իր ելույթում շոշափեց ընտանեկան բժշկության բնագավառում առկա խնդիրները: Նա ավելացրեց, որ ընտանեկան բժիշկները չեն եկել նեղ մասնագետներին փոխարինելու, այլ եկել են նրանց աջակցելու:

Խորհրդակցությանը մասնակցում էին նաեւ ՀԲ առողջապահության ծրագրի իրականացման գրասենյակի մասնագետ Գարիկ Աղաբեկյանը, երեւանի թիվ 17 պոլիկլինիկայի տնօրեն Գագիկ Սահակյանը, Հայաստանի սոցիալական բարեփոխումների ծրագիրը ներկայացնող Նենսի Ֆիլը:

ԱՆՆԱ ԳԱԻՐՅԱՆ
ՕՆՈՒՓՆԱՐ ՄՈՍՈՅԱՆ

Փոքր պատերազմների մահացու խաղալիքները

Լրատվամիջոցների կովկասյան ինստիտուտում երեկ կայացավ լիբանանահայ լրագրող Վիգեն Չեթերյանի «Փոքր պատերազմներ եւ մեծ խաղեր» գրքի շնորհանդեսն ու Գեորգ Ավագյանի «Մահացու խաղալիքներ» լուսանկարների ցուցահանդեսի բացումը:

Կովկասում լրագրողական մի քանի տարիների աշխատանքային փորձառությունից հետո Վիգեն Չեթերյանը գրում է գրքի անգլերեն տարբերակը՝ արեւմտյան ընթերցողներին առաջին անգամ ներկայացնելով տարածաշրջանի իրավիճակի մասին իր սեփական ըմբռնումներն ու վերլուծությունները: Գիրքը լույս տեսավ 2001 թվականին, Շվեյցարիայում, որից հետո մշտահղացում առաջացավ ռուսերեն թարգմանելու՝ նկատի ունենալով ռուսալեզու ընթերցողների հետաքրքրությունը կովկասյան ազգամիջյան խնդիրների նկատմամբ:

Վիգեն Չեթերյանը Շվեյցարիայում 90-ական թվականների սկզբից եվրոպական մի շարք լրագրերում լուսաբանել է կովկասյան իրավիճակները, տպագրել գիտական աշխատություններ ու մենագրություններ Կովկասի, Կասպիցի ու Միջին Ասիայի մասին: Նա «CIMERA» ավելցարական ՀԿ-ի հիմնադիրն է, երեւանի լրատվամիջոցների կովկասյան ինստիտուտի տնօրենը:

Նրա խոսքերով, դժվար է գրել իրավիճակի մասին, մանավանդ երբ պարզ ես ու թրծվել այդ բովում: Նա հուսով է, որ իր գիրքը մի նոր բան կավելացնի իրավիճակների պատմության մեջ՝ առաջադրելով իրատեսական մոտեցումներ դրանցից յուրաքանչյուրի վերաբերմամբ:

Բավականին ազդեցիկ էր մահացու խաղալիքներից՝ ականներից վիրավորված ու հաշմանդամ դարձած արցախցի երեխաների ու պատանիների լուսանկարները: Նրանցից ամեն մեկի կյանքի պատմությունը Գեորգ Ավագյանը գրի է առել՝ հետագայում գիրք դարձնելու մտադրությամբ:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 80 տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս: 374-1-562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրէն
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՔԵԼԵԱՆ / հեռ. 529353
Լրագրողների սենեակ
/ հեռ. 581841
Համակարգ. ծառայութիւն
/ հեռ. 582483
Շուրջօրյա լրահավաք ծառայութիւն
/ հեռ. 529353
Apple Macintosh
համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան, խստիւ արգելւում են, համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ

Ընթացիկ

Երբ կամայականությունը սկսվում է դատարան ոտք դնելու պահից

Տարբերային քաղաքացու դատական իրավունքների պաշտպանության խնդիրներին նվիրված քննարկմանը մասնակցելու համար հեռաձայնող լրագրողների ընկերակցությունը հրավեր էր ուղարկել Երևանի բոլոր առաջին ատյանի դատարաններին, սակայն ոչ ոք չէր ներկայացել: Այլ հրավիրյալներից արձագանքել էին միայն նորընտիր Ազգ-ի պետահրավական հանձնաժողովի նախագահ, իրավագիտության դոկտոր Ռաֆիկ Պետրոսյանը, ՀՀ փաստաբանների միության նախագահ Միհա Փիլիպոսյանը:

Օրենքի անկատարության պատճառով դատական գործի շատ հրողություններ ի սկզբանե հարվածում են քաղաքացու շահերին, ով արդարության հասնելու վերջին հույսը կապել է դատարանի հետ: Այդ խնդիրներից շատերը վաղուց ի վեր սրբագրումների կարիք ունեն: Երևանի, Կոտայքի եւ Շիրակի մարզերի առաջին ատյանի դատարաններում կատարած ուսումնասիրությունները պարզել են, որ 2003 թ. մինչեւ հունիսի 15-ը քաղաքացիների հայցադիմումները վերադարձնելու 894 որոշում է ընդունվել, հայցի ընդունումը մերժելու 77 որոշում, վերադարձվել է 1052-ը: Դատական հայցերի ընդունման կամ վերադարձման բազում օրինակներ, սակայն, շատ հաճախ կամայական են: Հետազոտությունը ցույց է տվել, որ հայցադիմումները վերադարձնելու պատճառաբանությունները բազմաթիվ դեպքերում հիմնավորված չեն, օրինակ՝ «փաստաթղթերը հայցադիմումին չկցելը», «բնօրինակները չկցելը» եւ այլն: Ռաֆիկ Պետրոսյանը նշեց, որ դա հայցվորի շահերի կողմից ոչնահարում է, քանի որ օրենքը թույլ է տալիս փաստաթղթերը նաեւ պատճենով ընդունել: Բնագիրը պահանջվում է լոկ կասկածներ առաջանալու պարագայում: Անիրազեկությունը, իրավական գիտելիքների պակասը պատճառ են դառնում, որ հայցվորը լռությամբ ընդունի փաստորեն աղօրինի որոշումը: Շատ քաղաքացիների հայցեր էլ չեն ընդունվում պարզապես նրանց՝ վճարելու հնարավորություններ չունենալու պատճառով: ՀՀ փաստաբանների միության նախագահ Միհա Փիլիպոսյանի հավաստմամբ, սակայն, պետքրքի օրենքը որոշակի արտոնություններ է նշում անապահովների համար: Քաղաքացիների մեծ մասը չգիտի, որ, ըստ հարկի, դատարանը կարող է զիջել կամ նվազեցնել պետքրքը: Չգիտի նաեւ ում դիմել մերժման դեպքում: Իսկ նրան պատասխանում են՝ ում ուզում ես, դիմիր: Նոր օրենսգրքից առանց արդարացման հանվել է նախկին օրենսգրքում գործող այն դրույթը, որը հստակ նշում էր մերժված հայցվորի անելիքները:

Դատարաններում այսօր մերժված ու վերադարձված հայցադիմումների ճշգրիտ քանակի վերաբերյալ որեւէ վիճակագրություն չի կազմվում ու պահպանվում: Խնդիրն ուշադրության չի արժանանում դատարանների գործունեության վերահսկողությունն իրականացնող որեւէ օղակում նույնպես: Ակնհայտ է, որ քննարկվող խնդիրների վերաբերյալ օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտությունը վաղուց է հասունացել: Այս առիթով համատեղ ուժերով նախաձեռնությամբ հանդես գալու որոշումը դարձավ լրագրողների ու իրավագետների քննարկման գործնական արդյունքը:

ԿԱՐԻՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆ



ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Մանկական պոռնոգրաֆիկ ֆիլմեր տարածողները

ՀՀ ազգային անվտանգության եւ ԱՄՆ պետդեպարտամենտի անվտանգության ծառայությունների փոխգործակցված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ հանրապետությունում գոյություն ունեն բարոյազուրկ անհատներ, որոնք անձնական շահ սանելու նպատակով ընդունակ են ամենատոհմ քայլերի՝ ընդհուպ մեր ժողովրդի բարոյականության համար հոգեհարազատ երիտասարդության դաստիարակության խաթարումը:

Մասնավորապես պարզվել է, որ հայ-ամերիկյան համակարգչային ֆիրմայի աշխատակից, Երեւանի բնակիչ Սուրեն Մանուկի Աբելյանը հանցագործ կապեր հաստատելով Ամերիկայում եւ Ռուսաստանում բնակվող հանցագործ առանձին տարրերի հետ, վերջիններիս միջոցով ձեռք է բերել եւ բարձր տեխնոլոգիաների եւ ինտերնետ ցանցի տեխնիկական հնարավորությունների օգտագործմամբ պատրաստել եւ տարածել է մանկական պոռնոգրաֆիկ ֆիլմեր՝ այդ գործում ներգրավելով նաեւ Երեւանի բնակիչներ Գանապետյանին եւ Նահապետյանին: Աբելյանի բնակարանում կատարված խուզարկության ժամանակ առգրավվել է շուրջ 50 մանկական պոռնոգրաֆիկ ֆիլմերի տեսասկավառակ:

Պոռնոգրաֆիկ ֆիլմերի պատրաստման եւ տարածման մեղադրանքով Աբելյանի եւ նրա հետ համագործակցած անձանց նկատմամբ գործ է հարուցվել ՀՀ քրեական օրենսգրքի 228 հոդվածով: Գործով նախաքննությունը վարում է ՀՀ ԱԱԾ քննչական վարչությունը:

Ձերբակալվել են դեղամիջոցների մախինացիաներ

ՀՀ ազգային անվտանգության մարմինները հուլիսի 15-ին ձերբակալել են Երեւանի բնակիչ Սաշիկ Սիմոնի Գալստյանին եւ «Շիրակ» օդանավակայանի ոստիկանության աշխատակից Ռաֆիկ Վոլոդյայի Մանուկյանին, որոնք հանցավոր փոխհամաձայնությամբ Մոսկվա-Ստեփանավան չվերթով, մախինացիա ճանապարհով հանրապետություն են ներկրել շուրջ 100 կգ դեղամիջոց:

Ներկրված մախինացիա դեղամիջոցներն առգրավվել են: Գալստյանի եւ Մանուկյանի նկատմամբ քրեական գործ է հարուցվել ՀՀ քրեական օրենսգրքի 73 հոդվածի մեղադրանքով: Գործով նախաքննությունը վարում է ՀՀ գլխավոր դատախազությունը:

ՀՀ ԱԱԾ մամուլի կենտրոն

«Հայներարտբանկը» փոխում է իր քաղաքականությունը

Վերջին 1-2 ամիսների ընթացքում «Հայներարտբանկը» սկսել է վերադարձնել հաճախորդների ավանդները: Տեղեկացնելով, որ այսուհետեւ բանկին ի պահ տրված գումարներին տոկոսադրույքներ չեն ավելանալու, հաճախորդներին առաջարկվում է հետ սանալ իրենց գումարները: Հայտնի է դարձել նաեւ, որ առաջիկայում 10 հազար դոլարից ցածր գումարը որպես ավանդ չի ընդունվելու, իսկ նշված եւ ավելի գումարներին տարեկան ավելանալու է 5 տոկոս:

Հիշեցնենք, որ «Հայներարտբանկի» քաղաքականության այս փոփոխությանը նախորդել էր նախկին ղեկավարության (տնօրեն՝ Բագրատ Ասատրյան) փոփոխումը:

Այդուհանդերձ, հարկ է նշել, որ փոփոխությունները հասարակության մեջ ցնցումներ չեն առաջացնում: Միաժամանակ անհասկանալի է մնում բանկի ղեկավարության կողմից հրապարակային պարզաբանումներից խուսափելը:

Եվ ընդհակառակը: Բնավ զարմանալի չէր (նկատի ունենալով, թե բանկն ում է պատկանում) նման դեպքերում սովորաբար ակտիվորեն հանդես եկող որոշ լրատվամիջոցների համեստորեն լռելը:

Ա. Մ.

Նարինե Դիլբարյանի ցուցմունքները զգալի մոտավոր են

Որոշ դեպքերում նաեւ «անտարակույս»

Երեկ շարունակվեց «Հոկտեմբերի 27»-ի գործով դատավարությունը՝ Վազգեն Սարգսյանի իրավահաջորդի շահերի պաշտպան Օլեգ Յունուսեւի միջնորդությամբ: Դատարան էր կանչվել վկա լրագրող Նարինե Դիլբարյանը: Յունուսեւը միջնորդեց ոչ թե սկսել ականատես վկաների հարցաքննությունը, այլ ավարտել Ազգային ժողովի պահպանության հետ կապված բոլոր վկաների քննությունը:

Դատավոր Սամվել Ուզունյանն այս կապակցությամբ նշեց, որ առկա է դատակոչված վկաների մեծ ցուցակ: Ըստ Ուզունյանի, դատարանը ծիշտ ճանապարհով է գնում՝ հարցաքննելով նախ ականատես վկաներին: Եվ հաշվի առնելով, որ ժամանակի խնդիր կա, Սամվել Ուզունյանն ավելացրեց նաեւ, որ չի բացառվում այսուհետեւ դատարանի 4-օրյա աշխատանքային ռեժիմի անցնելու հանգամանքը:

Ինչ վերաբերում է դատակոչում չընդգրկված վկաներին, ապա դատավորը նշեց, որ այդ հարցին կանդրադառնան դատակոչի ցուցակն ավարտելուց հետո:

Այնուհետեւ դատարանը շարունակեց գումարտակի նախկին հրամանատար Միհա Մանուչարյանի հարցաքննությունը: Մանուչարյանն ի պատասխան Ատոմ Սարգսյանի հարցերի նշեց, որ ինքն իսկապես դեպքի օրը կարմիր նախասրահում սպասել է վաշտի հրամանատար Գագիկ Հակոբյանին: Սակայն չգիտի, թե կրակոցների ժամանակ որտեղ է եղել Հակոբյանը: Միհա Մանուչարյանը պնդեց նաեւ, որ Ամ է եկել 16:30 նիստը սկսվելուց հետո: Այդ դեպքում, ըստ Մանուչարյանի ցուցմունքի, Մուշեղ Մովսիսյանը նիստերի դահլիճից դուրս է եկել նիստը սկսվելուց հետո: Դուրս է եկել, նստել Մանուչարյանի մոտ, բայց վերջինս չի տեսել, թե որտեղից է նա դուրս եկել:

Քիչ նստելուց հետո Մուշեղ Մովսիսյանը հեռացել է, ինչից 6-7 րոպե անց հնչել են կրակոցները: Շարունակելով պատասխանել հարցերին, Մանուչարյանը պնդեց, որ, ի հակադրություն Անդրանիկ Դարբինյանի ցուցմունքի, ինքը ոչ թե կանգնած է եղել Դարբինյանի հետ, այլ եղել է նստած եւ Դարբինյանն ինքն է մոտեցել իրեն: Ինչ վերաբերում է Կարմիր նախասրահի մյուս ոստիկան Ավետիք Թաշչյանի տված ցուցմունքների հետ Մանուչարյանի ասածների հակադրությանը, ապա երեկ վկան ասաց, որ գուցե Թաշչյանն է ծիշտ ասում: Այսինքն՝ Թաշչյանի եւ Մանուչարյանի ցուցմունքների միջեւ հնարավոր է, որ հակասություններ չկան:

Ավարտելով իր հարցաքննությունը, Ատոմ Սարգսյանն անդրադարձավ նախորդ դատական նիստում իր միջնորդությանը, որը վերաբերում էր վերջին ցուցմունք տված 3 ոստիկանների միջեւ առերեսում անցկացնելուն: Երեկ պրն Սարգսյանը նշեց, որ թերեւս Թաշչյանի հետ առերեսման կարիք չկա: Բայց պնդեց Անդրանիկ Դարբինյանի եւ Միհա Մանուչարյանի միջեւ առերեսում անցկացնելու անհրաժեշտությունը:

Միջնորդության կապակցությամբ մեղադրող Կորյուն Փիլոյանն առարկություն հայտնեց, ինչի կապակցությամբ Ատոմ Սարգսյանը հավելեց, որ Նաիրի Հունանյանն իր ցուցմունքում ժամանակին ասել է, թե Ալեքսան Հարությունյանը երաշխավորել է Ամ-ում ոստիկաններ չլինելու պարագան: Եվ ըստ Սարգսյանի, ինչպես երեւում է, ոստիկաններ չեն էլ եղել: Ուստի առերեսումն անհրաժեշտ է:

Դատավարության տարբեր մասնակիցների կարծիքները լսելուց հետո Սամվել Ուզունյանը հայտնեց, որ միջնորդությունը ժամանակին չէ եւ թերեւս դրան անդրադառնան հետո:

Երեկ դատարան էր հրավիրվել վկա, լրագրող Նարինե Դիլբարյանը: Նա ցուցմունք տվեց, որ ճանաչել է Նաիրի Հունանյանին որպես ֆակուլտետի ուսանողի: Իսկ Ն. Հունանյանը չհիշեց Դիլբարյանին: Վկան սկսեց նրանից, որ հոկտեմբերի 27-ին Ամ է գնացել ժամը 16-ին մոտ եւ այնտեղ է եղել մինչեւ մոտավորապես 17:30: Նարինե Դիլբարյանի ցուցմունքները կարեւոր են այնքանով, որ նա, ի տարբերություն մյուսների, մի որոշ ժամանակ կրակոցներից հետո դեռեւս մնացել է կանգնած՝ հնարավորություն ունենալով տեսնել դահլիճում կատարվող գործողությունները:

Ըստ Դիլբարյանի, բացվել է դուռը, ներս է խուժել զինված, սպիտակ անձրեւանոցով մեկը: Ներս խուժողը մտնելիս արդեն կարծես կրակել է: Այնուհետեւ Դիլբարյանը տեսել է Վազգեն Սարգսյանի սպանությունը եւ դեպի նախագահություն ուղղված կրակոցները:

Ի թիվս այլ հայտնի մանրամասների, երեկ վկան ասաց, թե նկատել է Հունանյանների քեռուն, որը կարծես ոգեւորությամբ ասում էր, թե բռնատիրությունը կործանվել է: Հետաքրքրական մանրամասն է նաեւ այն, որ Նարինե Դիլբարյանը ըստ էության թույլ չի տվել, որ Կարեն Հունանյանը, վտանգ զգալով, կրակի ինչ-որ բան փնտրող պետվիճվարչության պետ Ստեփան Մնացականյանի ուղղությամբ: Լրագրողներին ազատ արձակելուց հետո դահլիճից դուրս գալիս Դիլբարյանը հիշում է, թե ինչպես արդեն շենքից դուրս տեսել է այլայլված Նաիրի Բաղալյանին, որն ասում էր, թե տեսել է նրան (Նաիրի Հունանյանին): Ամ շենքից դուրս գալիս կենտրոնական դարպասների մոտ լրագրողները տեսել են Վահան Շիրխանյանին եւ տեղեկացրել նրան պատահածի մասին: Դիլբարյանը նշեց, որ այդ պահին Նաիրի Բաղալյանը գոռում էր Շիրխանյանին, թե բան ունի ասելու:

Հարցաքննության ժամանակ Նարինե Դիլբարյանը մանրամասնեց, որ ժամը 16:30-ից հետո, մինչեւ դեպքը, Շիրխանյանին փնտրելու նպատակով, բացել է Կարմիր նախասրահ տանող դահլիճի դուռը եւ միջանցքում տեսել Նաիրի Բաղալյանին եւ Նաիրի Հունանյանին: Թե երբ է տեսել եւ կոնկրետ ինչպես, Դիլբարյանը չկարողացավ ճշգրտել: Այնուամենայնիվ, մոտավորապես նշեց, որ դա եղել է ժամը 17-ի սահմաններում:

Հետագա հարցաքննությունը հիմնականում կապված էր Նարինե Դիլբարյանի նախաքննական ցուցմունքների հետ, որոնցում վկան բազմաթիվ մանրամասներ է հայտնել: Այդ մանրամասների առումով Դիլբարյանն արդեն դատարանում չկարողացավ հաստատական պատասխաններ տալ: Սակայն մասնավորապես Վոսմ Գալստյանի առումով ասաց, թե վերջինս, իր կարծիքով, ինքնարդարացման ձգտում ուներ, երբ վազվզում ու բղավում էր դահլիճում:

Հաջորդող հարցերին ի պատասխան վկան նշեց, որ մինչեւ 16:30-ի նիստի սկիզբը վստահ չէ, որ տեսել է Նաիրի Բաղալյանին: Չի տեսել նաեւ, թե ինչպես է դահլիճից դուրս եկել վիրավորված Անդրանիկ Մանուկյանը: Ինչ վերաբերում է նախաքննության ժամանակ տրված այն ցուցմունքին, թե Դիլբարյանը Նաիրի Բաղալյանին եւ Նաիրի Հունանյանին տեսել է Կարմիր նախասրահում, այդ կապակցությամբ դատարանում վկան հայտնեց, որ «99 տոկոսով» Բաղալյանի հետ կանգնած տեսել է Նաիրի Հունանյանին: Նաիրի Հունանյանի եւ Նաիրի Բաղալյանի դեպքի օրը Կարմիր նախասրահում զրուցելու մասին ցուցմունք է տվել նաեւ Վոսմ Գալստյանը:

Դիլբարյանը պնդեց նաեւ, որ Կարեն Հունանյանի ձեռքին դահլիճում եղել է նաեւ ատրճանակ: Այնուհետեւ Նաիրի Հունանյանին, Էդիկ Գրիգորյանին հետաքրքրում էր, թե Ստեփան Մնացականյանի վրա Կարեն Հունանյանը կրակելու մտադրություն ունեցե՞լ է: Նարինե Դիլբարյանը պատասխանեց, որ իր բղավելուց հետո Կարեն Հունանյանը սթափվել է, ինչից էլ ենթադրում է, թե Հունանյանը շրջվել էր դեպի Մնացականյանը կրակելու նպատակով:

Նաիրի Հունանյանի հոկտեմբերի 25-ին եւ 27-ին Ամ-ում լինելու եւ այդ օրերին տարբեր հագուստ կրելու մասին մի շարք հարցերից հետո էլ, խոսելով իր ցուցմունքների վերաբերյալ Նաիրի Բաղալյանի խիստ բացասական վերաբերմունքից, վկան հուզվեց: Բայց դատավոր Ուզունյանի հարցին ի պատասխան, թե արդյոք կաշկանդվա՞ծ է Նաիրի Բաղալյանի առումով, Նարինե Դիլբարյանն արձագանքեց այսպես. «Ես կաշկանդվածի կերպար ունե՞մ»:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ

Շենքը վաճառքի նախընթաց շրջանում

Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրությունը ԽՍՀՄ փլուզումից հետո տարբեր կարգավիճակային փոփոխությունների է ենթարկվել: Նախ ոլորտային ծեռնարկություն՝ սեփական ունեցվածքի իրավունքով, որին փոխարինել է մի այլ կարգավիճակ՝ ոլորտային փակ բաժնետիրական ընկերություն, որը ժառանգության կարգով ստացել է ունեցվածքը, նաեւ շենքը: Այդ ընթացքում խմբագրության աշխատակազմը մեծ է սեփականաշնորհման գործընթացներին մասնակցել, որովհետեւ դեմ է եղել ազգային արժեքների սեփականաշնորհմանը, գտնելով, որ դրանք պիտի լինեն պետական մենաշնորհ: ՀՀ կառավարության 2002 թ. փետրվարի 28-ի թիվ 800-ն որոշմամբ, «Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն» ՊՓԲԸ-ն վերակազմավորվել է «Հայկական հանրագիտարան հրատարակչություն» պետական ոչ առեւտրային կազմակերպության: Նույն որոշմամբ շենքը հանձնվել է հրատարակչությանը անհատույց օգտագործման իրավունքով՝ նպատակին համապատասխան օգտագործելու պայմանով: Բայց եւ՝ խմբագրության, եւ՝ ընթերցողներիս համար բոլորովին անհասկանալիորեն սույն որոշմանը հաջորդել է 2003 թ. հունվարի 9-ի վերոհիշյալ որոշումը, որը վավերացվել է ՀՀ նախագահի կողմից 2003 թ. հունվարի 21-ին: Այդ որոշման մասին հրատարակչությունը տեղեկացել է ընդամենը փետրվարի վերջերին շենքի նոր սեփականատեր դարձած «Ինեկոբանկ» ՓԲԸ աշխատակազմից: Այս բանկը Թումանյան 17 շենքում հայտնվել էր դեռեւս 1995-ին՝ շենքում տարածք վարձակալելով: Ընդունված կարգով կնքվել են պայմանագրեր՝ զբաղեցրած տարածքի եւ վարձավճարի չափի մասին: Հանուն արդարության պիտի ասել, որ վարձակալության գումարն այդ ամբողջ ժամանակահատվածում նպաստել է խմբագրության գործունեության արդյունավետ կազմակերպմանը, որը ֆինանսավորման այլ աղբյուր, բացի պետպատվերից, չի ունեցել եւ չունի: Մինչեւ 2003 թ. հիշյալ որոշումը, դեռեւս ՀՀ կառավարության 2001 թ. հունիսի 28-ի թիվ 578 որոշմամբ Թումանյան 17 հասցեի այդ շենքը որպես հանրապետության ճարտարապետական, գործառնական, ինչպես նաեւ մշակութային կարեւոր նշանակության շենք հանձնվել էր ՀՀ պետական կառավարման մարմնին, որով խմբագրությունը փաստորեն զրկվել է վարձակալության գումարից: Խմբագրության կառավարության համառությամբ կառավարության այդ որոշումը կասեցվել է միայն 2002 թ. սկզբին: Այսպիսով, 1971թ-ից ՀԿԿ կենտկոմի հատուկ որոշմամբ Թումանյան 17 հասցեում տեղակայված Հայկական հանրագիտարանի շենքային տարածքը (2401 մ) վաճառվել է 147 մլն դրամով՝ շուրջ 250.000 դոլար: Անակնկալի եկած հանրագիտարանի կոլեկտիվը 2003 թ. մարտի 28-ին գրություն է հղել հանրապետության նախագահին, որին ի պատասխան նախագահի աշխատակազմից շաբաթ չանցած տեղեկացել է, որ նամակն ուղարկվել է ՀՀ կառավարություն եւ պատասխան պետք է սպասել այնտեղից: Իսկ ապրիլի 25-ին՝ հակառակ տարական տրամաբանության, պատասխան է ստացվել Պետական գույքի կառավարման վարչությունից (մարմին, որը նախապատրաստել է այդ շենքի վաճառքը), որում գրված էր ՀՀ կառավարության 2003 թ. հունվարի 9-ի որոշման՝ հանրագիտարանի հրատարակչությանը վերաբերող մասը: Ստացվել է այնպես, որ շենքն ընդամենը մեկ տարվա ընթացքում ինչ-ինչ հանգամանքներում կորցրել է ազգային արժեք լինելու իր վերոնշյալ նշանակությունները եւ վաճառվել է «Ինեկոբանկին»՝ նրան ճանաչելով որպես հայտնի նախօրոք գնորդի:

Ընդհանուր տեղեկություններ՝ անցյալի եւ ներկայի

Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրությունը ձեւավորվել է 1965 թ.-ին ՀԿԿ կենտկոմի եւ ՀԽՍՀ նախարարների խորհրդի որոշմամբ, ստեղծված հայ գիտական մտավորականության (հայրենի եւ սփյուռքի) ջանքերով՝ իբրեւ համազգային նշանակության գործ՝ ժամանակին համեմատվել է Արիա-Սեւան թունելի եւ ատոմակայանի հետ:

Դեռեւս 30-ականներին խորհրդային հանրապետությունների մեջ առաջինը Հայաստանում փորձ է արվել ստեղծել հանրագիտարան՝ ձեռնարկությամբ Դրաստամատ Տեր-Սիմոնյանի, Ե. Չարենցի մասնակցությամբ, որը, սակայն, չի հաջողվել: Խմբագրությունը հիմնադրվել է աշխարհահռչակ աստղաֆիզիկոս Վիկտոր Համբարձումյանի գլխավորությամբ (1-ին գլխավոր խմբագիրն է եղել): Իրար հետեւից լույս տեսնող հատորները մշտապես ունենալով զանգվածային՝ 100 հազարից ավելի տպաքանակ, անմիջապես սպառվում էր: Յուրաքանչյուր ընտանիք պատիվ էր համարում եւ անհրաժեշտություն՝ իր տան գրադարանում ունենալ հանրագիտարանի հրատարակությունները: Չնայած հանրագիտարանային գրականություն (տեղեկատու, բառարաններ եւ այլն) ստեղծելու մեր ժողովրդի հարուստ ավանդույթներին, Հայկական հանրագիտարանն առաջին անգամ ընթերցողին ներկայացավ իբրեւ համաժարդակ, լրջորեն մշակված հայերեն գիտական տեղեկատու (անշուշտ, ինչ-ինչ առումներով տեղի տալով ժամանակի գաղափարախոսությանը): Առաջին անգամ մեր պատմությունը հանրագիտական տեսքի բերվեց, համաշխարհային մշակույթը ներկայացվեց հայերեն, հայկական տերմինաբանություն մշակվեց հատուկ հանրագիտարանի համար:

1988 թ. «Հայկական սովետական հանրագիտարանի» հրատարակության ավարտից հետո սկսվել են «Հայկական համառոտ հանրագիտարանի» աշխատանքները: Այս ընթացքում տպագրվել են «Հայկական հարց» հայերեն եւ ռուսերեն, «Ոսկեդարյան» եռահատոր մանկական հանրագիտարանը (իսկ 2002 թ. Մոսկվայում՝ ռուսերենով), «Բժշկական հանրամատչելի հանրագիտարանը», «Տնային տնտեսության հանրագիտարանը», քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունման 1700-ամյակի առիթով՝ «Քրիստոնյա Հայաստանը»: Այս տարի ընթերցողին կներկայացվեն «Հայկական համառոտ հանրագիտարանի» վերջին՝ 4-րդ հատորը, մեկ հատորով՝ ռուսերենը, իր տեսակի մեջ եզակի «Հայ սփյուռք» եւ «Ղարաբաղյան պատերազմ 1988-94 թթ.» հանրագիտարանները: Տպագրության է պատրաստվում նաեւ «Հայաստանի բնաշխարհ» հանրագիտարանը:

Կատարվածի բարոյական գնահատականը, նոր ելքեր

Թվարկված գիտական հիմնարար աշխատությունների մի մասը ստեղծվել է մեր պետության համար ոչ այնքան դյուրին ժամանակներում, անցումային շրջանի ծանր սոցիալ-տնտեսական պայմաններում, եւ ոչ այնքան հոգածու վերաբերմունքով դեպի սույն հաստատությունը: Դառնալով պետական ոչ առեւտրային կազմակերպություն (մշակույթի նախարարության համակարգում), հանրագիտարանի աշխատակազմի համար դեռեւս չի նշանակված աշխատավարձի ֆոնդ, ուստի վարձակալության գումարից զրկվելը մեծ ֆինանսական հարված էր հանրագիտարանի համար: Իհարկե, յուրաքանչյուր տարի պետպատվերային հրատարակությունների համար կառավարությունից տարեկան ընդհանուր հաշվով 20 մլն դրամ գումար է հատկացվել հրատարակչությանը՝ գրքերի ողջ տպաքանակը վերցնելու պայմանով: Այդ գումարը, սակայն, տրվում է շատ անկանոն. անցյալ տարի 1 անգամ է տրվել, այն էլ՝ դեկտեմբերի 29-ին, իսկ այս տարի դեռեւս ոչ մի դրամ չի ստացվել, չնայած վաղուց տարին կիսվել է: «Հանրագիտարանի աշխատակիցները ցածր աշխատավարձերով եւ այսօր արդեն աշխատանքային անբավարար պայմաններում ստեղծում են ազգային մնայուն արժեքներ: Սակայն այսօր պատշաճորեն հաշվի չեն առնվում նրանց շահերը, չեն գնահատվում հանրագիտարանի հետագա աշխատանքների շարունակման կարեւորությունը, կուտակված հսկայական փորձն ու տեղեկատվական պաշարը» (Հենրիկ Խաչատրյան):

Խաթարվող ազգային դիմագիծ

Հանրագիտարանի շենքը վաճառված

Հայաստանի կառավարության 2003 թ. հունվարի 9-ի թիվ 6-ն որոշումով «Ինեկոբանկ» փակ բաժնետիրական ընկերությանն է վաճառվել Երեւանի Թումանյան 17 հասցեում գտնվող շենքը (2401 մ), որտեղ 1971 թ.-ից գործում է Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրությունը: Վերջինիս 3 տարի ժամկետով անհատույց օգտագործման է հատկացվել 600 մ տարածք: Հարկ կա՞ արդյոք հանրագիտարանային արժեքների կարեւորության մասին վերստին իրազեկելու մեր հասարակությանը կամ կառավարության այն անդամներին, ովքեր ընդունել են սույն որոշումը: Թերեւս՝ այո: Որովհետեւ մեր մշակութային արժեքների գիտակցման եւ արժեւորման զգացումը հասարակության մեջ եւ մասնավորապես իշխանական վերին աստիճաններում հետզհետե նվազում է: Ամեն ինչ նյութեղենացնելու ծայրահեղ գործնապաշտ այս ձգտումները թերեւս իրեն հարգող որեւէ հանրության համար ընդունելի չեն կարող լինել: Ինչպե՞ս են ընդունում այս փաստը հանրագիտարանի, ղեկավարությունը եւ աշխատակիցները: Որոշմանը նախորդող իրադարձությունների (շենքն այստեղ սոսկ կառույցի դեր չունի. այն խորհրդանշում է մշակույթի դեմ իրականացվող վտանգավոր «հաղթարշավը») մասին զրուցեցինք գլխավոր խմբագիր-տնօրեն Հովհաննես Այվազյանի, տեղակալներ Հենրիկ Խաչատրյանի, Արամ Սարգսյանի, արվեստի եւ ճարտարապետության բաժնի վարիչ Վալիդա Մելքումյանի հետ:

«Գնորդի ով լինելն այստեղ էական չէ, անբարոյականությունը վաճառքի մեջ է, բուն փաստի մեջ: Ամեն ժողովուրդ եւ պետություն չէ, որ ունի հանրագիտարան՝ նման ավանդույթներով: Այս որոշումը կամա թե ակամա նպաստում է հանրագիտարանի փլուզմանը: Աղագայի իշխանությունները, եթե վերստեղծելու փորձ անեն, այն ժամանակ միայն կհասկանան, թե ինչ են կորցրել, դրանք վերականգնելու համար անհրաժեշտ կլինեն տասնամյակներ եւ հսկայական նյութական ու մարդկային ռեսուրսներ», այսպես խորհում է Արամ Սարգսյանը:

Իսկ մեր այն հարցին, թե այժմ իրավիճակը շտկելու ելքեր տեսնում ե՞ք, գլխավոր խմբագիր եւ տնօրեն Այվազյանը պատասխանեց.

«Իհարկե, լուծման եղանակ կա. ՀՀ կառավարության որոշումից հետեւում է, որ «Ինեկոբանկը» 2 տարվա ընթացքում պիտի վճարումները կատարի: Կառավարությունը կարող է վերանայել իր որոշումը եւ հանրագիտարանի հրատարակչության զբաղեցրած մասը ամրագրի որպես մեզ հատկացվող անհատույց օգտագործման տարածք սեփականության իրավունքով:

Եվ քանի դեռ բանկը չի կատարել մուծումներն ամբողջությամբ, վերահաշվարկ կատարել եւ գանձել համապատասխան չափով»:

Հ. Գ. Իմ զրույցի տպավորությամբ շենքի վաճառքը, որ իրականացվել է նախընթաց շրջանում կառավարության ընդունած որոշումների տրամաբանությամբ, այնուամենայնիվ, հանրագիտարանի աշխատակազմի համար անակնկալ եր: Կառավարության վերջին՝ թիվ 6-ն որոշումը ըստ էության նրանց մատնում է անորոշ ապագայի: Ի՞նչ է սպասվում 3 տարվա ընթացքում կամ ի՞նչ կլինի դրանից հետո:

ՄԵԼՔՈՆ ԲԱԴԱԼՅԱՆ

Գոնե մեկ հայագիտության թեքումով դպրոց կարելի է՞...

Խորհրդային տարիներին ռուսական դպրոցների առատությունից ու ռուսացման վտանգից տրտնջացող հայերս այսօր այնքան ենք տարված օտար լեզուներին գերադասություն տալու մոլուցքով, որ հաճախ մոռանում ենք հայերենի մեր իմացության թուլացման վտանգը:

Կրթական համակարգը ղեկավարողներին կարծես բնավ էլ չեն հուզում անցած տարի ակադեմիկոս Գեւորգ Ջահուկյանի արտահայտած մտահոգությունները գրավոր ու բանավոր հայերենի աղքատացման միտումների մասին: Անտարբերության է մատնվել հանրակրթական դպրոցներում գրաբարի դասավանդում մտցնելու նրա առաջարկը: Հայ անվանի գիտնականների կարծիքը հաշվի չառնելով՝ իրագործվում են կրթական այնպիսի ծրագրեր, որոնք ամենից առաջ մեզ հեռացնում են դարերի պատմություն ունեցող հայ ավանդական դպրոցի ավանդույթներից:

Նման մոտեցման պայմաններում միանգամայն բնական է, որ երեւանում գոնե մեկ հայագիտական թեքումով դպրոց ունենալը պիտի դառնար մի քանի տարի շարունակ հետեւ համագործակցելու «Մաշտոց միավորման» փորձերն, ըստ էության, աղարդյուն են, որովհետեւ պետականորեն իրականացվում են ոչ հայանպաստ ծրագրեր: Հայագիտության նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու եւ հայերենագիտության զարգացումը ամուր հիմքերի վրա դնելու համար «Մաշտոց միավորումը» ձգտում է հանրակրթական դպրոցներից մեկը դարձնել այնպիսին, որտեղ հայագիտության համալիրը կազմող առարկաների խորացված դասավանդումը կազմակերպվի միջին եւ ավագ դպրոցում: Հիմնական առարկաներից բացի, ուսումնական ծրագրում կընդգրկվեն վայելչագրություն, բարեկրթություն, հայկական պարարվեստ, ճարտասանություն, բանահյուսություն, ազգագրություն, գրաբարի հիմունքներ, հայոց լեզվի պատմություն, իմաստաբանություն, արտասահմանյան գրականություն, պետություն եւ իրավունք առարկաները:

Այդպիսի դպրոց ունենալը, ցավոք, արհեստական խոչընդոտներով է ուղեկցվում: Հիմնական խանգարիչ հանգամանքը օտար լեզուների դասավանդման շեմը չփոխելու պահանջն է, այսինքն՝ օտար լեզուներ պետք է դասավանդվեն միմիայն առաջին դասարանից: «Մաշտոց» միավորումը դեմ է այդ պահանջին այն հիմնավորումով, որ երեխաների բանավոր լեզվամտածողությունը ձեւավորվում է մինչեւ դպրոց գնալը, գրավորը՝ տարական դպրոցում, ըստ այդմ էլ, նպատակահարմար է օտար լեզուներ անցնել չորրորդ դասարանից:

Կրթության նախարարությունը ոչ մի կերպ չի զիջում, անգամ հաշվի չառնելով, որ ծրագիր իրականացնողներն ապահովում են օտար լեզուների դասավանդման ընդունված մակարդակը:

Կրթական բարեփոխումների կենտրոնն, իհարկե, ողջունում է հայագիտության թեքումով դպրոց ստեղծելու նախաձեռնությունը, սակայն կարծիք է հայտնում, որ ներկայացված հայեցակարգում ու հիմնադրույթներում անտեսված են սովորողների ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալի վերաբերյալ հանրակրթական դպրոցի հենքային ուսումնական ներկայացված չափանիշները: Կենտրոնի պահանջով հայեցակարգը վերանայելուց, ճշգրտելուց, պետական չափորոշիչներին համապատասխանեցնելուց եւ դրան կից բոլոր փաստաթղթերը հանգամանորեն հիմնավորելուց հետո միայն կներկայացվի կրթության եւ գիտության նախարարության հաստատմանը:

Ասել է, թե նման պահանջով «Մաշտոց միավորմանն» առաջարկվել է կրճատել տրամաբանություն զարգացնող առարկաների՝ ֆիզիկա, մաթեմատիկա եւ այլն, ժամաքանակը, եւ դրա հաշվին ուսուցանել հայագիտական լրացուցիչ առարկաներ: Միավորման կրթության հանձնաժողովը տարակուսանք է հայտնում «Կրթության բարեփոխումների կենտրոնի» տնօրեն Վիկտոր Մարտիրոսյանի նման առաջարկի առիթով: Մի՞թե պետական նվազագույն ծրագիր հասկացողություն գոյություն չունի եւ կամայականորեն կարելի է փոփոխել առարկայական ծրագրերը՝ անունը դնելով խորացված ուսուցում: Նման պահանջով միավորումը անիրականանալի է համարում հայագիտության թեքումով դպրոցի բացումը:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ԱՄՆ-ի հետ համընկնում են ոչ թե Թուրքիայի շահերը, այլ՝ տեսակետները

Այն էլ Հայոց ցեղասպանության հարցում միայն

Հուլիսի 15-ի հաղորդագրությամբ «Նոյյան տաղանը» տեղեկացրել էր ԱՄՆ-ի եւ Թուրքիայի սնորագրած համաձեռ հայտարարության մասին, որտեղ կողմերը ափսոսանք են հայտնել Իրաքի հյուսիսում ամերիկյան դեսանտայինների կողմից թուրքական օդերեւութային հասուկ ջոկատի 11 զինվորների ծերբակալության առնչությամբ: Միաժամանակ նրանք պարտավորվել են համակարգել գործողությունները եւ անել այն ամենը, ինչ անհրաժեշտ է նման միջադեպերից խուսափելու համար:

Ինչպես հայտնի է, հուլիսի 4-ին հրադադարային Սուլեյմանիե ավանում տեղի ունեցած ծերբակալության այս միջադեպն աննախադեպ սրել է ԱՄՆ-ի եւ Թուրքիայի հարաբերությունները: Քանի որ պաշտոնական Անկարան լրջորեն անհանգստացել է, թե Վաշինգտոնը կասկածի տակ է դնում թուրք-ամերիկյան ռազմավարական դաշինքի նպատակահարմարությունը, ուստի համաձեռ հայտարարության ստորագրումը որպես ծեռքբերում պիտի գրանցվեր նրա ակտիվում: Հատկապես այն դեպքում, երբ ստորագրման նախօրյակին նախագահ Ջորջ Բուշը եւ Ամերիկայի հրեական կոմիտեն, համանուն այլ կառույցների հետ, ընդառաջելով Թուրքիային, նպաստել էին ԱՄՆ Սենատի օրակարգից Հայոց ցեղասպանության բանաձեւի դուրսբերմանը: Ընդառաջվել էր նաեւ Թուրքիայի արտգործնախարար Աբդուլլահ Գյուլին պաշտոնական այցով Վաշինգտոնում հյուրընկալելու Անկարայի խնդրանքը:

Հարկ է սակայն նշել, որ պահանջների կամ խնդրանքի ընդառաջումը միշտ չէ, որ հանգեցնում է հարաբերությունների սրման պատճառների վերացմանը: Նույնը վերաբերում է նաեւ համաձեռ հայտարարության ստորագրմանը: Այլապես ԱՄՆ պաշտպանության նախարար Դոնալդ Ռամսֆելդը պաշտոնական նամակով Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանին չէր դիմի: Այս մասին հուլիսի 17-ի առավոտյան տեղեկացրեց թուրքական հանրային հեռուստատեսությունը՝ առանց անդրադառնալու նամակի բովանդակությանը:

Հատկանշական է, որ Ռամսֆելդի նամակը Բուշի անունից է ուղարկվել: Նկատի ունենալով Էրդողանի զբաղեցրած պաշտոնը, առաջին հայացքից թվում է, թե այստեղ արտառոց ոչինչ չկա: Սակայն հանձին Ահմեդ Նեջդեթ Սեզերի, Թուրքիան եւս նախագահ ունի: Այլ կերպ, ԱՄՆ նախագահը պաշտպանության նախարարի միջոցով Թուրքիայի վարչապետին դիմելու փոխարեն, նամակն ուղղակիորեն կարող էր Սեզերին հասցեագրել: Հետեւաբար նամակի հասցեագրման պարագան անհասկանալի է:

Անհասկանալի են նաեւ Ռամսֆելդի նամակին թուրքական թերթերի տրամագծորեն հակադիր մոտեցումները: Եթե դրանց մի մասը նշում է, որ Հյուսիսային Իրաքում թուրք սպաները ծերբակալվել են առանց Պենտագոնի իրազեկության, ինչը ստիպել է Ռամսֆելդին ընդունել սխալն ու ներողություն խնդրել, մյուսները գրում են. «Դեռ մեր գլխին այնքա՞ն պարկ կհագցնեն»:

Ինչպես հայտնի է, ամերիկացի դեսանտայինները, ծերբակալելով թուրք սպաներին, ծեռքերը շղթայել եւ նրանց գլխին պարկ էին հագցրել: Այս թերթերը, դրա օրինակով պարկի մասին գրելիս, ակնարկում են Թուրքիային: Ինչո՞ւ: Այն պարզ պատճառով, որ Ռամսֆելդն իր նամակում, վերջիններիս տվյալներով, միջադեպի առնչությամբ ոչ թե ներողություն է խնդրել, այլ դրա պատասխանատվությունը բարդել թուրքական կողմի վրա, ընդգծելով. «Թուրք զինվորականները, ինչպես Քիրքուքի կառավարչի, այնպես էլ Հյուսիսային Իրաքի մյուս քուրդ առաջնորդների դեմ մահափորձ էին պատրաստում եւ զինում էին թուրքմեններին: Այդ իսկ պատճառով էլ մենք ծերբակալեցինք նրանց»:

Այս տողերով Ռամսֆելդը թուրքերին ակամա խոստովանում է, որ Վաշինգտոնն իրազեկ է եղել թուրք սպաների ծերբակալությանը, եւ ծերբակալությունն անմիջականորեն կատարվել է Պենտագոնի հրամանով: Հարցը, սակայն, սոսկ խոստովանությունը չէ, այլ Իրաքի հյուսիսում տեղակայված թուրքական զորամիավորումների գործունեությունն անմիջականորեն վերահսկելու, ինչպես նաեւ Թուրքիայի քաղաքական ամեն մի նախաձեռնություն անհապաղ կասեցնելու ԱՄՆ-ի վճռականության մասին հերթական նախազգուշացումը: Սա նշանակում է, որ ամերիկացիներն, անկախ թուրքերի հետ ստորագրած համաձեռ հայտարարությունից, միջադեպերից խուսափելու միջոց դիտում են Թուրքիայի ինքնագործունեության բացառումը:

Բացառման պայմաններում վերոհիշյալ խոստովանությունը դառնում է յուրահատուկ նախազգուշացում, իսկ դա Թուրքիային կանգնեցնում է երկընտրանքի առջեւ: Կամ նա պետք է համակերպվի Իրաքի հյուսիսում ԱՄՆ-ի քաղաքական ծրագրերին, կամ էլ հակադրվի դրանց: Համակերպվելու դեպքում նա ակամա նախադեպ է ստեղծում Թուրքիայի քրդերի համար: Իսկ հակադրվելու պարագայում սպառնալիքի տակ է դնում ԱՄՆ-ի հետ ռազմական եւ ռազմավարական դաշինքը: Այլ կերպ, երկու դեպքում էլ Թուրքիայի ազգային շահերը հակասում են ԱՄՆ-ի շահերին: Թերեւս նրանց տեսակետներն են համընկնում, սակայն դա էլ Հայոց ցեղասպանության հարցում է միայն:

Այս ամենն առանձնակի նշանակություն է հաղորդում Թուրքիայի արտգործնախարար Աբդուլլահ Գյուլի Վաշինգտոն կատարելիք այցին: Համենայն դեպս, թուրքական հանրային հեռուստատեսությունը տեղեկացրեց, որ ԱՄՆ-ի պետքարտուղար Քոլին Փաուելի հետ նրա հանդիպման օրակարգում երկկողմ հարաբերություններին, քուրդ զինվորականների ծերբակալությանը, Հյուսիսային Իրաքի քրդերին, հետպատերազմյան Իրաքի վերակառուցմանը, տարածաշրջանի քաղաքական զարգացումներին, Կիպրոսին եւ Եվրամիությանը Թուրքիայի անդամակցությանն առնչվող խնդիրներն են: Մնում է սպասել արդյունքներին:

ՀԱԿՈԲ ՉԱՔԱՐՅԱՆ

Խաբեության մառախուղը

Այս խորագրի ներքո **Ալբերտ Հանքն**, անդրադառնալով Իրաքի զանգվածային ոչնչացման զենքերի վերաբերյալ Բուշի նախապատերազմյան հայտարարություններին, **«Ուղղ սրտիք ջոռնալ»** թերթի հուլիսի 10-ի համարում կարծիք է հայտնում, որ եթե իր սիրային արկածների մասին ստելու համար իմփիչմենտ էր հասնում Բիլ Քլինթոնին եւ եթե Ալ Գորին կարելի էր վարկաբեկել Ջեյմս Լի Ուիլի հետ չափազանցված հարաբերություններ ունենալու համար, ապա այս դեպքում էլ ստելու համար անհրաժեշտ է հետաքննություն անցկացնել, պարզելու՝ դիտավորյա՞լ էր ստում Բուշը, թե՞ իրոք տեղյակ չէր: Իսկ եթե նա չգիտեր, ապա ո՞վ գիտեր եւ չէր տեղեկացրել նախագահին:

«Սա ամենագաղտնապահ վարչակարգն է Ռիչարդ Նիքսոնի ժամանակաշրջանից ի վեր, հայտարարել է, ըստ լրագրողի, սենատոր Գրահամը: Ամբողջ հարցն այն է, գրում է Հանքը, որ առանց այդ սպի էլ բավականաչափ հիմքեր կային Հուսեյնին տապալելու: Նա դաժան բռնակալ էր, որն ագրեսիվ կերպով ապակայունացնում էր տարածաշրջանը՝ հսկայորեն խախտելով զանգվածային ոչնչացման զենքերի վերաբերյալ ՄԱԿ-ի որոշումները:

Աֆրիկայից (հատկապես Նիգերիայից) ուրանիումի ծեռքբերման եւ Բաղդադ-«Ալ Ղաիդա» կապի առկայության պնդումներն անհիմն էին: Նախագահը կամ գիտեր դրա մասին, կամ հսկայ տեղեկացված չէր: Իսկ Կոնգրեսը փորձում է խուսափել պատասխանատվությունից՝ ջանալով պարզել, թե ինչպես է ժողովուրդը թյուրիմացության մեջ ընկել:

Բացասական պատասխաններ սպասելով ԱՄՆ նախկին դեսպան Ջոզեֆ Ուիլսոնից, որն ուղարկվել էր Նիգերիայում, այնուամենայնիվ, ինչպես անցյալ սեպտեմբերին, այնպես էլ դեկտեմբերին բրիտանացիները հեռաստեղծեցին, թե Իրաքը Նիգերիայից ուրանիում է ձեռք բերում: Իսկ Բուշն իր հունվարյան ուղերձում հենվել էր բրիտանացիների եւ ոչ իր կառավարության հաղորդումների վրա:

Դիկ Չեյնին տեղյակ էր դրանից: Եթե՝ ոչ, ապա ո՞վ էր թաքցնում նման կարեւոր տեղեկությունը նախագահից: Ինչո՞ւ ազգային անվտանգության ղեկավար Կոնդոլիսա Ռայսն ու պաշտպանության քարտուղար Դոնալդ Ռամսֆելդը նույն անհիմն հայտարարություններն են արել: Եվ վերջապես ինչո՞ւ պետքարտուղար Քոլին Փաուելը ՄԱԿ-ում իր ելույթի ընթացքում չի շոշափել Սադդամ-Նիգերիա կապի հարցը: Այսպիսի հարցերի շարան է հարուցում հոդվածագրին, որը պահանջում է հսկայ պատասխաններ: Ժողովուրդն իրավունք ունի իմանալու, եւ տկն Ռայսի՝ «Գուցե ինչ-որ մեկը գործակալությունում գիտեր» անորոշ պատասխանը NBC-ի «Հանդիպում մամուլի հետ» ծրագրի՝ բավարար չափով չի կարող տրել խաբեության մառախուղը:

Դինոզավրի մնացորդներ Լոխ Նեսի ափերին

Շոտլանդիայի Լոխ Նես լճի ափերին հայտնաբերվել են երկրի վրա մոտ 150 մլն տարի առաջ ապրած դինոզավրի մնացորդներ: Հնէաբանների խոսքերը վկայակոչելով, Ռոյթեր գործակալությունը հաղորդում է, որ հայտնաբերված գտածոները քարացած ողներ են եւ որեւէ կապ չունեն վերջին տարիներին մեծ աղմուկ հանած առասպելական լոխնեսյան հրեշի հետ:

Դինոզավրի մնացորդները պատահաբար գտել է 67-ամյա տեղաբնակ Հերալդ Մաքսոլին: Ողները լճից հանելով, նա դրանք տարել է Շոտլանդիայի ազգային թանգարան: Վերջինիս ներկայացուցիչը գտնում է, որ դժվար թե դինոզավրը լույս աշխարհ եկած լինի այնտեղ, որտեղ հայտնաբերվել են նրա մնացորդները: «Դրանք այստեղ են հասել բնական կամ արհեստական ճանապարհով», ընդգծել է նա:

Բանն այն է, որ դինոզավրի մնացորդները մոտ 150 մլն տարեկան են, մինչդեռ վերջին սառցադաշտային ժամանակաշրջանում առաջացած Լոխ Նես լճի տարիքն ընդամենը 10 հազար տարի է:

Մ.ՆԱՀԱՆԳԵՐ

Բուշի ժողովրդականությունն իջել է 50 տոկոսի

Դա կանդրադառնա ընտրարշավի վրա

ԱՄՆ-ում անցկացված վերջին հարցումները վկայում են, որ ամերիկացիների ընդամենը 50 տոկոսն է հավանություն տալիս նախագահ Ջորջ Բուշի քաղաքականությանը՝ ապրիլին արձանագրված 74 տոկոսի դիմաց:

Բուշի ժողովրդականության անկումը պայմանավորված է մի շարք գործոններով: **«Ազգն»** արդեն գրել է, որ 2003 ֆինանսական տարին սեպտեմբերի 30-ին ավարտվելու է 455 միլիարդանոց ռեկորդային պակասուրդով: Պատահական չէ, որ 2004 թ. նախագահական ընտրությունների համար մրցարշավ ծավալած թեկնածուների մեծ մասը քննադատում է «երկրի տնտեսության աղետալի կառավարումը» Բուշի օրոք, դատապարտելով «հոգուս հարուստների» հարկերը կրճատելու նրա ծրագիրը:

Փոխնախագահության նախկին թեկնածու, սենատոր Ջոզեֆ Լիբերմանը, որն այժմ ձգտում է նախագահ դառնալ, հայտարարել է. «Բուշը կրկնում է իր վաս սովորությունները՝ խաբում է ամերիկյան հանրությանը եւ պատասխանատվություն չի ստանձնում իր սխալների համար: Ամենը գիտեն, որ բյուջեի պակասուրդը հարկերի անարդարացի եւ անարդյունավետ կրճատումներն են»:

Ի դեպ, ԱՄՆ կառավարությունը խոստովանել է, որ եթե հարկերը չկրճատվեին, ապա 2003 թ. բյուջեն կավարտվեր ընդամենը 278 միլիարդանոց պակասուրդով:

Նախագահի ժողովրդականության անկման մյուս պատճառն Իրաքի պատերազմն է, որի ավարտից հետո էլ այդ երկրի կայունությունը պահպանելու նպատակով ամսական ծախսվում է 4 մլրդ դոլար: Դա պատերազմից առաջ Պենտագոնի նախատեսածի կրկնապատիկն է, ընդգծում է «Լիբերասիոն» թերթը:

Նախագահական ընտրարշավում Բուշի ախոյան դեմոկրատները շեշտում են, որ նա «ձեռ է առնում ամենին», քանի որ կառավարությունն Իրաքի հետ կապված ծախսերը չի ներառել 2004 թ. բյուջեի նախագծում: Սենատում դեմոկրատների առաջնորդ Թոմ Դեշլը նախագահից պահանջել է ներկայացնել «Իրաքում իր մտադրությունների ստույգ ծրագիրը եւ դրան առնչվող ծախսերը»:

Կոլումբիա համալսարանի քաղաքագիտության պրոֆեսոր Շերին Օ՛Հելորանը նշում է, որ Բուշն այսօր անպատշաճ է ինքնագոհություններից: «Ամերիկացիներից շատերը չեն վստահում նրան: Բուշը չկարողացավ առողջացնել երկրի տնտեսությունը, նա ծախողում է կրում Իրաքում, պատերազմն արդարացնելու նպատակով թերեւս ստել է, ամերիկացիներին հավաստիացնելով, թե Իրաքը փորձել է ուրան գնել Աֆրիկայում», ասում է պրոֆեսորը:

Մի խոսքով, դեմոկրատների համար բարեբաստի առիթ է ստեղծվել 2004 թ. նախագահական ընտրություններում Ջորջ Բուշին նեղը գցելու համար:

Պ. ՔԵՇԻՇՅԱՆ

Գեներալ Էբիզեյդ. «Իրաքում պարտիզանական պատերազմ է ծավալվել»

Իրաքում անգլո-ամերիկյան կոալիցիոն ուժերի գլխավոր հրամանատար, գեներալ Ջոն Էբիզեյդը երեկ առաջին անգամ հրապարակավ խոստովանել է, որ օկուպացիոն ուժերը գործ ունեն «դասական պարտիզանական պատերազմի» հետ:

CNN հեռուստաընկերությունը հաղորդում է, որ չորեքշաբթի օրն ամերիկացիների ավտոշարասյան գնդակոծման հետեւանքով Բաղդադում սպանվել է եւս մեկ ամերիկացի զինվոր: Դրանից հետո Իրաքում ԱՄՆ-ի կորուստները կազմել են 148 զոհ՝ հավասարվելով 1991 թ. «Անապատի փոթորիկ» գործողության ընթացքում զոհվածների թվին:

Ըստ որում, ամերիկացի զինվորներից 33-ը զոհվել են մայիսի 1-ից հետո, երբ նախագահ Ջորջ Բուշն ազդարարեց Իրաքի պատերազմի ավարտը:

Ջոն Էբիզեյդը, որը նաեւ ԱՄՆ կենտրոնական հրամանատարության ղեկավարն է, Պենտագոնում մամլո ասուլիսում խոստովանել է, որ պատերազմն, այնուամենայնիվ, շարունակվում է, թեեւ դա «փոքր ինտենսիվության հակամարտություն է»:

Գեներալը մտահոգություն է արտահայտել, նշելով, որ Իրաքում դիմադրության շարժումը դարձել է ավելի կազմակերպված, եւ որ ամերիկացիների վրա հարձակումներ են կատարում 6-8 հոգուց կազմված փոքր խմբեր:

Ըստ որում, հարձակվողները ոչ միայն անցյալում կառավարած Բաաս կուսակցության անդամներ են, Սադդամ Հուսեյնի հատուկ ծառայությունների աշխատակիցներ եւ զինվորականներ, այլեւ օտարերկրացիներ, որոնք Իրաք են թափանցում օկուպացիոն ուժերի դեմ մարտնչելու:

Փոխհրաձգություն երկու Կորեաների սահմանագծում

Երեկ առավոտյան Հարավային եւ Հյուսիսային Կորեաները բաժանող ապառազմականացված գոտում տեղի է ունեցել երկու կողմերի սահմանապահների կարճատեւ փոխհրաձգություն: Ասոշիեյթեդ պրես գործակալությունը հաղորդում է, որ միջադեպի հետեւանքով հարավկորեացիներից որեւէ մեկը չի տուժել: Հյուսիսկորեացի սահմանապահների մեջ վիրավորների կամ սպանվածների գոյության մասին որեւէ տեղեկություն չի ստացվել:

Տեղական ժամանակով ժամը 6:10 Յոնչոն քաղաքի շրջանում հյուսիսկորեական կողմն ավտոմատային 4 կրակահերթ է արձակել: Մեկ րոպե անց հարավկորեացիները պատասխանել են 17 կրակահերթով:

Հարավկորեացի զինվորականները ենթադրում են, թե ԿԺԴՀ-ն գործի է դրել 14,5 մմ տրամաչափի ավտոմատ զենք, որի օգտագործումն ապառազմականացված գոտում արգելված է 1953 թ. զինադադարի համաձայնագրով:

Շուրջ կես լայնությամբ ապառազմականացված գոտին 38-րդ զուգահեռականի երկայնքով հատում է Կորեական թերակղզին: Այդ գոտում վերջին անգամ փոխհրաձգություն էր տեղի ունեցել 2001 թ. նոյեմբերի 27-ին: Իսկ անցյալ տարվա հունիսին ծովային միջադեպի ժամանակ հյուսիսկորեացիները խորտակեցին հարավկորեական ռազմանավակ, տեւականորեն վատթարացնելով երկու Կորեաների հարաբերությունները:

«...Այդ իմ տիրության արդյունքն է...», կրկներ Վահրամ Մավյանը»

Հարցազրույց Շահե արք. Ածեմյանի հետ

- Սիրելի Սրբազան հայր, դուք Վահրամ Մավյանի հասակակիցն եք եւ երկար տարիների մտերիմը, այսօր մեր զրույցը լինելու է Մավյան գրողի, մարդու, նրա բարոյականության ներդաշնակության բացառիկ օրինակ լինելու ու նաեւ հայրենիփսիյուռք կամրջող այդ անդադրում շինարարի անգնահատելի գործերի մասին:

- Մավյանի հիշատակն ինձի համար թանկագին է: Մենք նույն տարիքն ունինք: Ես տակավին կամ, ինքը չկա, ճանչցած եմ զինքը, երբ առաջին անգամ Կիպրոսի Մելգոնյան վարժարանեն եկավ Երուսաղեմ՝ 1963 թ.-ն: Ծնած է Երուսաղեմ, հայրը խահանա էր եւ կծառայեր Սուրբ Բեթղեհեմի հայոց վանքին մեջ: Մեծցած է այնտեղ, ուսանած նշանավոր ուսուցիչներու քով: Երուսաղեմի Թարգմանչաց վարժարանին մեջ է ճանչցած նշանավոր գրաքննադատ Հակոբ Օշականը, արվեստաբան-երաժիշտ Շահան Պերբերյանը: Իմիջիայլոց նաեւ եղիշե Պատրիարք Տերտերյանը, որուն գրական անունը եղվարդ էր, ան ալ բանաստեղծ: Իրար ճանչցած են շատ կանուխեն եւ հաճախ եղիշե Սրբազանը կպատմեր իր մասին:

Մի առեւոտ օր մեզի եկավ բարձրահասակ, հետաքրքրական մի երիտասարդ՝ միշտ ժպիտը շուրթերուն, աչքերը փայլուն, միշտ խոսքի մեջ բառ մը նետելով, որով կիայտնվեր իր շատ սուր միտքը: Բերած էր Երուսաղեմ «Հայու բեկորները» հատորին ձեռագիրը եւ մենք մեր նոր ստացած տպագրական մեքենայի վրա տպեցինք այդ գիրքը: Տոն էր իր համար: Երբ իրեն ըսի,- Վահրամ, այնպիսի նյութ ես ընտրած, որ անսպառ է. միշտ, ամեն տեղ հայու բեկոր մը կա, ե՞րբ պիտի այդ բոլոր բեկորները մեկ հատորի մը մեջ ամփոփես: «Եթե ամփոփեմ՝ համ չունենար,- ըսավ, պետք է ազատ ձգեմ, որ ամեն ոք իր տարօրինակություններով երեւա, ես ալ գրեմ»:

Օր մը, երբ երկուքով նստած էինք եղիշե Սրբազանին քով, ան ալ սրամիտ, խոսակցության ընթացքին տրվեցավ հարցը, թե ինքն այդքան գնահատելով գեղեցիկ սեռը, ինչո՞ւ չամուսնանար: «Գլուխս փորձանքի տա՞կ պիտի դնեմ. ես գիշերները կգրեմ, կնստիմ ժամերով կգրեմ, ամուսնանամ՝ գրիչս վա՞ր դնեմ»:

Երբ կպտրաստվեր աշխատելու Գյուլպենկյան հաստատության մեջ, Լիզբոն, ուր ավելի փոքր առիթ պիտի ունենար ճամփորդելու, խոստացանք նոր գիրք ստեղծելու պարագային երկին Երուսաղեմ տպագրել: Շատ ուրախացավ, սակայն խնդրեց, որ գիրքին տեսակը փոքր մը փոխենք եւ ավելի ոճանտիկ տառեր գտնենք տպագրության համար:

Երկու տարի հետո, երբ բերավ «Ամեն տեղ հայ կա» հատորին ձեռագիրը, շատ ավելի գեղեցիկ տառատեսակով տպեցինք: Վահրամ չէր սիրեր ոչ ուրախության մեջ չափազանցություն եւ ոչ ալ տխրության: Հավասարակշռված, բայց ուրախ բան մը ուներ իր մեջ. սկիզբը այն տպավորությունը կրնայիր ունենալ, թե շատ լուրջի չառներ ամեն բան, այլ հեգնանքով կնայի ամեն ինչի: Սակայն ավելի ուշ, երբ լավ ճանչցա զինքը՝ գտա, որ այդպես չէ: Ինքը շատ լուրջ մտահոգություններ ունի իբրեւ հայ եւ այդ մտահոգություններն են, որ զինքը կառաջնորդեն գրելու այն հայ տիպարներուն մասին, որ ծլան ու ծաղկեցան սփյուռքին մեջ:

Ես շատ հանդիպումներ ունեցա իրեն հետ հետո, ավելի ուշ, 70-ական թվականներուն: Հանդիպեցա իրեն Փարիզ՝ ամուսնանալեն առաջ եւ ետք: Կերթայինք միասին ճաշարան մը կնստեինք չորս-հինգ ժամ: Մանավանդ շատ հարցումներ կըներ Գյուլպենկյան հաստատության մասին: Շատ կը գովեր պրն Եսայանին (Գյուլպենկյանի աղջկա ամուսինը):

Լրացավ սփյուռքահայ ճանաչված եւ սիրված գրողի՝ Վահրամ Մավյանի ծննդյան 75 տարին: Մենք ուշացանք նշելու այդ տարեթիվը. ինչպես հաճախ ուշանում ենք... Երբեմն էլ մոռանում: «Հայու բեկորներ», «Ամեն տեղ հայ կա» եւ այլ գրքերի հեղինակ Վահրամ Մավյանը շուրջ երկու տասնամյակ վարել է Գալուստ Գյուլպենկյան հիմնարկության հայկական բաժնի տնօրենի պաշտոնը, եւ իր այդ հանգամանքով նաեւ շրջել է տարբեր գաղութներ, օգնել սփյուռքահայ բազմաթիվ դպրոցների եւ, միաժամանակ, տեւական մեծ օգնություն կազմակերպել Երեւանի պետական համալսարանին, Մատենադարանին, ԳԱԱ-ի տարբեր ինստիտուտներին, մշակութային օջախներին: Ստորեւ լույս տեսնող հարցազրույցը հանգուցյալ գրողի մտերիմ անձնավորություններից մեկի՝ Երեւանի պետհամալսարանի աստվածաբանության ֆակուլտետի դեկան, դոկտ., պրոֆ. Շահե արքեպիսկոպոս Ածեմյանի հետ է:

- Այդ շրջանում հնարավոր չեղա՞վ հայության համար օգտակար քայլ անել, թեկուզ եւ փեսայի օգնությամբ, անկարելի՞ էր:

- Չեմ ըսեր, թե անկարելի էր, սակայն մեծահարուստ Գալուստ Գյուլպենկյանը արտառոց մարդ մը եղած է, որ տեսակ մը թե իր հայությունով կհպարտանար, կընդուներ իր հայ ըլլալը, մյուս կողմե ալ կասեր:

Վահրամն ինձի պատմեց, թե ինչպես Արշակ Չոպանյանը ֆրանսերենով գրված իր երկու հատորներով՝ «Ծաղկեփունջ Հայաստանի», կներկայանա Գ. Գյուլպենկյանին, խնդրելով, որ ան ստանձնե անոնց տպագրությունը: Գյուլպենկյանը կընդունի եւ կըսե, որ Չոպանյանը երկու շաբաթեն նորեն գա իր մոտ: Երբ կվերադառնա Չոպանյանը, կզգա, որ իրմե Գյուլպենկյանը կարդացեր է իր գիրքը. շատ մը գովեստի խոսքեր ըսելե հետո, հաստատելով նաեւ, որ հիանալի ֆրանսերենով է գրված, անիկա Չոպանյանին ըսեր է. «Ուրիշներ հավանաբար չմերժեին Ձեր խնդրանքը, սակայն ես կսիրեմ մերժել»: Այդպես ալ մերժվեցավ գրքին տպագրությունը: Վահրամը կըսեր ինձի, որ Գյուլպենկյանը հայությունը զրկեց իր հսկա հարստությունեն, որ, ըստ գնահատանքի, մահվան ատեն՝ 1953-54 թթ., կներկայացներ 400 միլիոն անգլիական ստեռլինգ:

Գյուլպենկյանի տարօրինակություններու մասին պատմած է նաեւ, որ ունեցած բոլոր հնություններն ու ամբողջ հարստությունը թանգարանի պիտի վերածվի: Այդ թանգարանին մեջ կանգի աղամանդյա զարդեր կան, որոնք ինքը կատարեր Փարիզ գտնվող իր հատուկ ոսկերիչին, որպեսզի նվիրե այն կիներուն, որոնց ինք հարմար կնկատեր: Քիչ մը տարօրինակ մարդ մը եղած է պրն Գյուլպենկյան. իր զավակն իրմե ավելի վաս, անիկա արդեն բան մը չժառանգեց իր հորմե եւ նույնիսկ դաս բացավ հոր դեմ: Եվ ամբողջ այդ հարստությունը մնաց պորտուգալցի փաստաբանի մը, որ պատարվեստի մարդ:

Վահրամին հետ մեր զրույցները միշտ ալ հարստացուցած են զիս: Անգամ մը ըսի իրեն, որ այդքան նուրբ զգացականություն ունիս, շատ խորը թափանցող գրիչ, իրավունք չունիս քանի մը տարի միայն մեկ գրքույկ հրատարակելու, քիչ մը ավելին ըրե, բանաստեղծություններ ալ մի՝ գրեր, անոնք այնքան էլ փայլուն չեն, երեսիս նայեցավ ու ըսավ. «Ինչո՞ւ ատանկ կըսես...»:

Հիանալի անձնավորություն մըն էր, որ զինքը ճանչցողներու սրտին մեջ հետքեր ձգած է: Շատ ազնվական հոգի ուներ, իշխանական նկարագիր մը: Իր տիպարներու մեջ կդներ իր այդ մարդկայինը, խորո՞ւնկ-խորո՞ւնկ մարդկային զգացականությունը: Իր ենթադատությունները միշտ կատակի ձեւով կարտահայտվեին, հումորով:

- Վահրամ Մավյանը եղել է Հայաստանում, մասնակցել նաեւ Հայաստանի գրողների VIII համագումարին, տպավորությունների մասին ի՞նչ կարող եք ասել:

- Հայաստանի մասին միշտ լավ կխոսեր եւ բացի այդ, համարյա բոլոր գրողներուն գործերը կարդացած էր, բոլորին մասին իր կարծիքն ուներ: Սակայն զուսպ էր:

- Հավանաբար այդ էր պատճառը, որ իրեն ճանաչողներին, նաեւ գրողներին, երբ հարցնում ես՝ ինչպիսի՞ն էր Վահրամ Մավյանը, միշտ պատասխանը եղել է՝ «փայլուն մարդ», «կիրթ անձնավորություն», «մխացող հոգի»:

- Ես ամենեն շատ տպավորված էի առաջին գիրքով: Հոն կա տիպար մը՝ Լիզբոնի մեջ հայ գորգավաճառ մը, որ իր խանութը հայկական հարցերու կեդրոն դարձած էր եւ կհուսար, որ հայկական դատը լուծելի է իր այդ գորգի խանութին մեջ...

- Իսկ ես հիշում եմ Լոնդոնի «Արմենիան էլաբը», հնակարկաս մի կոշկակար, որ իր այդ նեղլիկ խցիկը հայտարարել է իբրեւ հայկական ակումբ, որպեսզի հայության հետ առիթ ունենա շփվելու... Եվ այսպես շարունակ, կարելի է հիշել իր գործերը՝ շաղախված հումորով ու ծիծաղով: Այժմ շատերը չէ, որ հիշում են Վահրամ Մավյանին եւ շատերն էլ չկան այլեւս, ու ես ուրախ եմ այսօր, որ առիթը ներկայացավ վերհիշելու մեր սիրելի գրողին, մեր գրականության «մխացող» դեմքերից մեկին, շնորհակալություն Ձեզ, Շահե Սրբազան, այսօրվա հանդիպման եւ մտերմիկ զրույցի համար:

- Գիտե՞ք, որուն կնմանեցնեմ իր ճակատագիրը. իբրեւ գրողի՝ Զարիֆյանին, ան ալ բացառիկ գրող էր, բայց շատ քիչ կարդացված: Ան իր տեղը չէ գտած գրական աշխարհին մեջ, հուսանք, որ առաջընթաց կըլլա:

Վերջապես չեմ ուզեր, որ Վահրամ Մավյանի մասին մեր խոսակցությունը տխուր կետի մը վրա վերջանա: Ես կհավատամ մեր ժողովուրդի սիրուն, մեր հայ գրին եւ գրականության, կհավատամ, որ այս դժվար օրերեն հետո կվերածնվի բանաստեղծությունը մեր հոգիներուն մեջ. ժողովուրդը չի կրնար առանց գիրի ապրիլ, պետք է ունենա իր բանաստեղծն ու նաեւ Մավյաններ պիտի գան հարստացնելու մեր գրականությունը:

- Հուսանք, շնորհակալություն:

Հարցազրույցը՝
ԳՈՂԹԱՆ ԱԾԵՄՅԱՆԻ

Ինչպիսի՞ն կլինի «Կասկադի» վերջնական տեսքը

Սկիզբը էջ 1

2002 թ. նոյեմբերին «Գաֆեսճեան թանգարան» հիմնադրամի նախաձեռնությամբ կայացած մրցույթին մասնակցող միջազգային ճանաչման 35 ճարտարապետական ընկերություններից երեքը հնարավորություն ստացան առաջադրելու թանգարանի նախնական նախագծային հայեցակարգը: Դրանք են՝ Նյու Յորքից եւ Փարիզից Բեռնարդ Շումի ճարտարապետները, Վիեննայից Քոափ Հիմելբլաու, Հոլանդիայի Ռոտերդամ քաղաքից էմ-Վի-Ար-Դի-Վի կազմակերպությունները: Այդ մասին երեկ «Կասկադում» տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ տեղեկացրեց «Գաֆեսճեան թանգարան» հիմնադրամի գործադիր տնօրեն եւ Ջ. Գաֆեսճյանի օգնական պրն Ջոն Ուոթերը:

Նման ճարտարապետական մրցույթ առաջին անգամ է անցկացվում ոչ միայն Հայաստանում, այլեւ ողջ ԱՊՀ տարածքում կառուցվելիք որեւէ համալիրի համար: Մրցույթի մասնակիցները նախապես իրազեկված են եղել Հայաստանի, Կասկադի տարածքի եւ հիմնադրամի մասնագետներին: Հաղթող երեք ընկերություններն էլ ճանաչված են այս ասպարեզում եւ ունեն թանգարանային կառույցներ իրականացնելու փորձ՝ յուրաքանչյուրն իր ուրույն ոճով ու ստեղծագործական ազատ մոտեցումներով: Նրանցից մեկը հակված է ճարտարապետական արտահայտությունները բնության մեջ եղած ձեւերին մոտեցնելու սկզբունքին՝ խեցեղեն հիշեցնող տանիքներով, օվկիանոսի ալիքների տեսքով, մյուսը՝ ավելի կոնցեպտուալ մոտեցումներով: Նախագծերի ազատ եւ արդիական ոճը թերեւս մեզ կարող է օտարոտի կամ անսովոր թվալ: Այդ իսկ պատճառով «Գաֆեսճեան թանգարան» հիմնադրամը «Կասկադ» համալիրի երկրորդ ցուցասրահում այսօրվանից մինչեւ օգոստոսի 1-ը կազմակերպելու է վերոհիշյալ նախնական նախագծերի ցուցադրություն՝ հասարակությանը հնարավորություն տալով մասնակցելու նախագծերի քննարկմանը, կատարելու առաջարկություններ եւ դիտողություններ:

Պրն Ուոթերը ներկայացրեց հիմնադրամի նպատակը եւ նշանակությունը, տեղեկացնելով, թե այն ունի բարի միտումներ՝ շուտ հաղորդել այս տարածքին, «մի սքանչելի խորհրդապատկեր ստեղծել Հայաստանում՝ համաշխարհային նշանակությամբ ճարտարապետական մշակութային միջազգային մակարդակի» հիշյալ կառույցով: Ըստ գործադիր տնօրենի, այն աշխարհին կներկայացնի հայ ժողովրդի ստեղծագործ ուժը եւ գբոսաշրջիկների մեծ հոսք կապահովի դեպի Հայաստան:

Ներկայացված երեք նախագծերի միջեւ մինչ վերջնական ընտրություն կատարելը, հիմնադրամը համագործակցելու է հասարակության լայն շրջանակների, ինչպես եւ հայ ճարտարապետների հետ: Իսկ վերջնական ընտրությունը պատկանում է պրն Գաֆեսճյանին, որ նույնպես համագործակցում է մասնագետների մի սվար խմբի հետ եւ՝ Հայաստանից, եւ արտերկրից: Արդյունքում թանգարանը կդառնա Հայաստանի համար մշակութային մնայուն հարստություն՝ իբրեւ նվիրատվություն ազգային բարերար Ջերալդ Գաֆեսճյանի կողմից:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

Միակ անակնկալը գրանցվեց Մալթայում

Ս եկնարկեց չեմպիոնների լիգայի որակավորման առաջին փուլը: ՈՒԵՖԱ-ի գործակիցների աղյուսակում ցածր տեղեր զբաղեցնող 20 երկրների չեմպիոնները սկսեցին իրենց մրցավեճը հաջորդ փուլի ուղեգրերի համար: Առաջին հանդիպումներում գլխավոր անակնկալը մատուցեցին Մալթայի «Սլիեմա Ուոնդերերզ» թիմի ֆուտբոլիստները, որոնք սեփական հարկի տակ 2-0 հաշվով պարտության մատնեցին Ռիգայի «Սկոնտոյին»: Այդ խաղում հաշիվը 63-րդ րոպեին բացեց Բոգդանովիչը, իսկ 5 րոպե անց Իսկովը խախտեց խաղի կանոնները, եւ մրցավարը 11 մ հարված նշանակեց «Սկոնտոյի» դարպասին միաժամանակ հյուրերի ֆուտբոլիստին հեռացնելով խաղադաշտից: Եվ Դոնչիչը կրկնապատկեց հաշիվը: Սակայն, կարծում ենք, 2-0 հաշիվը դեռեւս Մալթայի չեմպիոնի համար հաջորդ փուլի ուղեգիր չի ապահովել: Բացի «Սկոնտոյից», նախկին ԽՍՀՄ հանրապետությունների մյուս ակումբները հաջող մեկնարկեցին: Թբիլիսիի «Դինամո» 3 անպատասխան գնդակ ուղարկեց Ալբանիայի չեմպիոն «Տիրանայի» դարպասը: Վրաց ֆուտբոլիստներից աչքի ընկան Մելկաձեն, Անչաբաձեն եւ Դարասելիան, որն իրագործեց 11 մ հարվածը: Բելառուսի ԲԱՏԷ-ն իռլանդական «Բոգեմիանսին» հաղթեց շնորհիվ Լոբանկովի խփած միակ գոլի:

Մոլդովայի «Շերիֆի» եւ էստոնիայի «Ֆլորայի» մրցավեճի ելքն էլ վճռեց միակ գնդակը, որի հեղինակը դաշտի տերերի հարձակվող, ռումինացի լեգեոներ Տուդորն էր: Ընդ որում, գոլը նա խփեց խաղավարից 2 րոպե առաջ: Լիտվայի «Կաունասը» 1-0 հաշվով հյուրընկալվելիս պարտության մատնեց Ֆարերների «Թորսհավնին»: 74-րդ րոպեին աչքի ընկավ Օրիցը: Ղազախստանի «Իրտիշը» Կիպրոսում ոչ-ոքի (0-0) խաղաց «Օմոնիայի» հետ եւ լավ հնարավորություն ստացավ սեփական հարկի տակ պայքարելու հաջորդ փուլի ուղեգրի համար: Հաշիվը չբացվեց նաեւ «Գրեվենմախեր» Լյուքսեմբուրգ-«Լեոթար» Բոսնիա եւ «Գլենտրան» Հս. Իռլանդիա-«Հելսինկի» Ֆինլանդիա հանդիպումներում: Մակեդոնիայի «Վարդարը» սեփական հարկի տակ 3-0 հաշվով պարտության մատնեց Ուելսի «Բարի Թաունին»: 2 գոլ խփեց Սանթոսը, մեկ անգամ աչքի ընկավ Ռիստովսկին:

Եվ այսպես, չեմպիոնների լիգայի նոր խաղարկության մեկնարկը տրված է: Կայացել են առաջին հանդիպումները, եւ այժմ մրցակիցներին հարկ կլինի հուլիսի 23-ին անցկացնելու պատասխան խաղերը: Այդ օրն էլ հայտնի կդառնա, թե արդյոք բավակա՞ն էր երեւանում «Ռեյկյավիկի» դարպասը խփված միակ գնդակը հաջորդ փուլ դուրս գալու համար: Հիշեցնենք, որ հաջողության դեպքում ՀՀ չեմպիոն «Փյունիկին» սպասում է Սոֆիայի ԲԿՄԱ-ի հետ մրցավեճը:

Սարգսյանը դուրս մնաց պայքարից

Շտուտգարտում ընթացող թենիսի մրցաշարում, որի մրցանակային հիմնադրամը 765 հազար եվրո է, առաջին փուլի արգելքը հաղթահարելուց հետո անհաջողության մատնվեց Սարգիս Սարգսյանը: Երկրորդ փուլում նա չկարողացավ հաղթահարել չեխ թենիսիստ Իրժի Նովակի դիմադրությունը (4-6, 4-6): Վերջինս հաջորդ փուլում իր ուժերը կչափի ռուս թենիսիստ Միխայիլ Յուժնու հետ, որը պայքարից դուրս էր մղել էկվադորցի Նիկոլաս Լապենտիին: Ի դեմ, Լապենտին անցած շաբաթ շվեդական Բաստադ քաղաքում հասավ մինչեւ եզրափակիչ: Հաջորդ փուլում հանդես գալու իրավունք ստացան նաեւ Ֆիլիպո Վոլանդրին, Թոմաս Բերենտը, Ռայներ Շուլերը եւ Ֆեռնանդո Գոնսալեսը:

Որոշվում են քառորդ եզրափակիչի մասնակիցները

Մեխիկայում ավարտվեցին Հյուսիսային եւ Կենտրոնական Ամերիկայի ֆուտբոլի առաջնության «C» եւ «D» խմբերի նախնական հանդիպումները: «C» խմբում Սալվադորի հավաքականը 1-0 հաշվով պարտության մատնելով Մարտինիկայի ընտրանուն, վաստակեց 3 միավոր եւ ԱՄՆ-ի ֆուտբոլիստներից հետո նվաճեց քառորդ եզրափակիչի ուղեգիրը: «D» խմբում կայացավ Կոստա Ռիկա-Կուբա վճռորոշ հանդիպումը: Կոստա Ռիկայի ֆուտբոլիստներին պայքարը շարունակելու համար միայն հաղթանակ էր անհրաժեշտ: Եվ նրանք հասան իրենց նպատակին՝ 3 անպատասխան գնդակ խփելով կուբացիների դարպասը: Հետաքրքրական է, որ վերջին գոլի հեղինակ դարձավ Կոստրոն ազգանունով ֆուտբոլիստը: Այսպիսով, «D» խմբում 3 հավասարներն էլ՝ Կոստա Ռիկան, Կուբան եւ Կանադան վաստակեցին հավասար միավորներ, սակայն խփած եւ բաց թողած գնդակների լավագույն տարբերությամբ ուղեգիրը բաժին հասավ Կոստա Ռիկայի եւ Կուբայի ֆուտբոլիստներին:

Մեկնարկը տրվեց

Հուլիսի 16-ին մեկնարկեց ֆուտբոլի Շվեյցարիայի նոր առաջնությունը: Այս երկրի առաջնության նկատմամբ մեր հետաքրքրասիրությունը բացատրվում է նրանով, որ շվեյցարական թիմերում են խաղում ՀՀ հավաքականի անդամներ Արթուր Պետրոսյանն ու Հարություն Վարդանյանը: Նրանք շուրջ երկու մրցաշրջան հանդես էին գալիս «Յանգ բոյզում», իսկ այժմ նոր մրցաշրջանը դիմավորեցին տարբեր թիմերում: Ինչպես ժամանակին տեղեկացրել ենք, Արթուրը եռամյա պայմանագիր է կնքել «Ցյուրիխի» հետ, իսկ Հարությունը առաջիկա մեկ տարին կանցկացնի «Սերվետում»: Մեր ֆուտբոլիստներից նորամուտը հաջող ստացվեց Հարություն Վարդանյանի համար: «Սերվետը» սեփական հարկի տակ 3-1 հաշվով պարտության մատնեց «Վիլին»: Իսկ ահա «Ցյուրիխը» հյուրընկալվելիս 1-2 հաշվով զիջեց «Բազելին»: Առաջնությունը պարտությամբ սկսեց երկրի չեմպիոն «Գրասհոպերսը», որը սեփական հարկի տակ անպատասելիորեն զիջեց «Քսամաքսին»: «Յանգ բոյզը» հյուրընկալվելիս խոշոր հաշվով (4-1) առավելության հասավ «Սենտ Գալենի» նկատմամբ: «Թուն»-«Արաու» մրցախաղում գրանցվեց ոչ-ոքի (1-1):

Եվ, այնուամենայնիվ, կյանքը հիանալի է

«Սկարպ» մարզաառողջական կենտրոնը Երեւանում հիմնվել է 1999 թ., Աշոտ Սկրտչյանի նախաձեռնությամբ: Նրան օգնեցին, իհարկե, իր ընկերները: 9 տարի առաջ՝ 1994 թ., ավտովթարի հետեւանքով վնասվեցին Աշոտի ոտքերը: Նորից քայլելու նրա բոլոր ջանքերն ապարդյուն անցան: Բայց կամքի ուժը, տոկունությունը, լավատեսությունը, հումորի մեծ զգացումն օգնեցին նրան պահպանելու առողջ ոգին, հաղթահարելու դժվարությունները: Բժիշկների խորհրդով սկսեց զբաղվել սպորտով: Անվասայլակով տեղաշարժվող մարդու համար դա կարեւոր է, քանի որ նստած վիճակում մկանների կարճացում է առաջանում: Կենտրոնը նպաստում է ողնաշարային (սպինալ) հաշմանդամների առողջության պահպանմանն ու վերականգնմանը:

Մեծ Բրիտանիայի դեսպանատան ֆինանսական աջակցությամբ ստեղծվեց կենտրոնի մարզադահլիճը, որը հագեցած է տարբեր մարզագործիքներով: Այս տարի կենտրոնը վերածեւավորվեց հասարակական կազմակերպության: Շաբաթը 3 անգամ են մարզվում կենտրոն հաճախողները՝ թվով 60-70 հոգի: Կենտրոնը չունի փոխադրամիջոց: Յուրաքանչյուրն իր մեքենայով է գալիս՝ ճանապարհին իր հետ վերցնելով նաեւ մյուսներին: Կենտրոնում յուրաքանչյուրն իր նախընտրած մարզաձեւով է զբաղվում (ծանրամարտ, բազկամարտ, շախմատ): Շատերն են հասել որոշակի հաջողությունների: Օրինակ, Աշոտի առավելագույն բարձրացրած քաշը 140 կգ է: Մյուսները նույնպես իրենց ընտրած մարզաձեւում ձգտում են առաջընթաց ունենալ եւ ցանկանում են Հայաստանի տարածքում մրցումների մասնակցել: Մրցաշարերը հասարակությանն ինտեգրման հիանալի միջոց են: Աշխարհում ընդունված մրցույթներ են դրանք, որոնք տարբեր խորագրերի ներքո են անցկացվում: Կենտրոնում հաշմանդամների հետ առողջ մարդիկ էլ են զբաղվում տարբեր մարզաձեւերով:



«Սկարպը» համագործակցում է նմանատիպ մյուս հասարակական կազմակերպությունների հետ («Հույսի կամուրջ», «Կամք եւ կորով», «Փարոս» եւ այլն): Անհրաժեշտության դեպքում տրամադրում է նրանց իր մարզադահլիճը: Կենտրոնի անդամները տարբեր մասնագիտությունների տեր մարդիկ են: Ընդօրինակելով Կարմիր խաչի փորձը, «Սկարպի» հիմնադիր Աշոտը ցանկանում է կենտրոնում տարբեր արհեստագործական (ոսկերչություն, ձեռքի աշխատանք, գորգագործություն) խմբակներ հիմնել: Արհեստ ձեռք բերելուց հետո կենտրոնի անդամները կարող են աշխատել, նյութապես օգնել իրենց ընտանիքներին: Կենտրոնի անդամների մեջ իրավաբաններ կան, որոնց մասնակցությամբ կարելի է իրավաբանական խորհուրդ ստեղծել: Սակայն այս ամենի համար մեծ տարածք է հարկավոր: Քաղաքապետարանից արդեն թույլտվություն են ստացել ընդլայնելու տարածքը: Նպատակների իրագործման համար պարբերաբար ծրագրեր են ներկայացնում դոնոր կազմակերպություններին՝ դրամաշնորհ շահելու ակնկալիքով: Ֆինանսական աջակցությունը կնպաստի իրենց գաղափարների իրականացմանը:

Կենտրոն հաճախողները մտերիմ են միմյանց հետ, աջակցում են լիարժեք կյանքով, շատերն՝ ընտանիքներ ունեն: Մինչ վնասվածք ստանալն էր Աշոտն ամուսնացել, այժմ ունի ամուր ընտանիք, 12 տարեկան որդի: Կան զույգեր, որոնք ընտանիք են կազմել վնասվածք ստանալուց հետո: Կենտրոնի անդամները հաճախ են միջոցառումներ կազմակերպում, ծննդյան տոներ նշում, քաղաքից դուրս գալիս: Իրենց ընտանիքների մյուս անդամներն էլ են ներկա լինում միջոցառումներին, հարազատներին շրջապատում ջերմությամբ: Կենտրոնում աշխատում են օրթոպեդիոնալ մարզիչներ, որոնցից շատերը՝ բարեգործական հիմունքներով: Արդյունավետ աշխատանք են տանում հոգեբանները: Կա նաեւ համակարգիչ, մտադիր են հետագայում համակարգչային դասընթացներ կազմակերպել:

Ծրագրերը շատ են, որոնց իրականացման համար անհրաժեշտ են հայ ձեռներեցների, միջազգային կազմակերպությունների ուշադրությունն ու ֆինանսական աջակցությունը: Տեսնելով կենտրոն հաճախող ուրախ դեմքերը, ակամա մտածում ես, որ, այնուամենայնիվ, կյանքը հիանալի է:

ԱՐԴԱ ԱԲՐԱՀՅԱՆ

Գելֆանդի առավելությունն ակնհայտ էր

Բորիս Գելֆանդը մեկ անգամ եւս ապացուցեց, որ արագ շախմատի գծով հանդիսանում է աշխարհի ուժեղագույն շախմատիստներից մեկը: Նա 8 պարտիայից բաղկացած մրցախաղ անցկացրեց Հուդիթ Պոլգարի հետ: Առաջին պարտիան ավարտվեց հունգարուհի գրոսմայստերի առավելությամբ: Սակայն հաջորդ պարտիաներում Գելֆանդը ցուցադրեց իր ողջ կարողությունները՝ տոնելով 4 անընդմեջ հաղթանակ: Հարվածն այնքան ուժեղ էր, որ Հուդիթն այլեւս չկարողացավ ուշքի գալ: 2 պարտիա ավարտելով ոչ-ոքի, Հուդիթը պարտվեց նաեւ ավարտական տուրում: Գելֆանդը մրցախաղը շահեց 6-2 հաշվով:

«Բորուսիան» սկսեց հաղթանակով

Գերմանական լիգայի գավաթի խաղարկությունում հաղթանակով մեկնարկեց Դորտմունդի «Բորուսիան», որը 2-1 հաշվով առավելության հասավ «Բոխումի» նկատմամբ: Հաղթողներից գոլերի հեղինակներ դարձան Թոմաս Ռոսիցկին եւ Մարսիո Ամորուզոն: Կիսաեզրափակիչում «Բորուսիայի» մրցակիցը կլինի «Շտուտգարտը»: Կիսաեզրափակիչի մյուս խաղին երկրի չեմպիոն «Բավարիայի» մրցակիցը կորոշվի «Համբուրգի» եւ «Հերտայի» մրցավեճում:

Խաղադաշտում ռոբոտներն են

Իտալական Պադուե քաղաքում անցկացվեց ֆուտբոլի աշխարհի առաջնություն ռոբոտների միջեւ: Եզրափակիչում աշխարհի չեմպիոնի կոչումը վիճարկեցին ԱՄՆ-ի եւ Ավստրալիայի հավաքականները: Խաղի հիմնական 20 րոպեները չբավականացրին ռոբոտներին հաշիվը բացելու համար, թեեւ ամերիկացիներից մի «ֆուտբոլիստ» հեռացվեց, իսկ ավստրալիացիները չիրացրին 11 մ հարվածը: «Ոսկե գոլի» կանոնով անցկացված եզրափակիչ խաղում հաջողությունն ուղեկցեց ԱՄՆ-ի թիմին: Հետաքրքրական է, որ ռոբոտների հանդիպումը վարում էր կենդանի մրցավարը՝ 25-ամյա կանադացի Շոն Վեբեսը: RoboGup 2003-ի ժամանակ անցկացվեցին նաեւ առաջնություններ միջին չափերի (մինչեւ 50 սմ) ռոբոտների եւ ռոբոտ շների միջեւ:

Աբրամովիչի օրինակը վարակիչ է

Հետեւելով Ռոման Աբրամովիչի օրինակին, հարավամերիկացի միլիարդատերերից մեկը բանակցություններ է վարում անգլիական «Աստոն Վիլայի» բաժնետոմսերի 29,9 տոկոսը գնելու շուրջ: Դա հնարավորություն կտա նրան դառնալ Բիրմինգհեմի ակումբի խոշոր բաժնետեր: Ինչպես տեղեկացրել է ակումբի ներկայիս տեր, 79-ամյա Դուգ Էլիսը, հնարավոր գնորդը վենեսուելցի ՖԻՖԱ-ի նախկին մրցավարն է, որն իր կարողությունը դիզել է շինարարության ոլորտում իրականացրած բիզնեսով: Հետաքրքրական է, որ վենեսուելցին սկզբում որոշել էր գնել «Չելսիի» բաժնետոմսերը, սակայն Չուկոտկայի նահանգապետ Ռոման Աբրամովիչը նրանից առաջ ընկավ:

Դյաչինը կրկնակի մրցանակակիր

Բարսելոնում անցկացվող ջրային մարզաձեւերի աշխարհի առաջնությունում հաջող են հանդես գալիս ռուսաստանցի մարզիկները: 10 կմ լողահերթում լավագույն արդյունքի հասավ ռուսաստանցի Վլադիմիր Դյաչինը, որը մրցաարածությունը հաղթահարեց 1 ժամ 50 րոպե 58,8 վրկ-ում: Նախորդ օրը նա 5 կմ մրցաարածությունում արժանացել էր բրոնզե մեդալի: Իսկ այս անգամ նվաճեց աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Կանանց 10 մ ոսնակացատկում ոսկե մեդալի արժանացավ Էմիլի Խեյմանը: Ջրագնդորդների մրցավեճում «D» խմբում հանդես եկող Սլովակիայի ընտրանին 7-4 հաշվով պարտության մատնեց բրազիլացիներին: Իսպանիայի հավաքականը մրցաշարում 2-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց՝ 10-8 հաշվով պարտության մատնելով ռուսներին: Իսպանացիները գլխավորում են աղյուսակը 2 միավորով: Հաջորդ տեղերում են ռուսները, Սլովակիայի եւ Բրազիլիայի ջրագնդորդները: Հաջող մեկնարկեցին Եվրոպայի չեմպիոն Սերբիայի եւ Չեռնոգորիայի մարզիկները, որոնք 7-6 հաշվով պարտության մատնեցին ավստրալիացիներին:

Էջը պատրաստեց
ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ

Օրվա հետքերով

Հնդկաստանում ջրհեղեղից առնվազն 200 մարդ է զոհվել

Հնդկաստանի հյուսիսում՝ Հիմաչալ Պրադեշի նահանգում կես ժամ տեւած տեղատարափ անձրեւներն աննախադեպ ջրհեղեղ են առաջացրել մի շարք շրջաններում: Հնդկական հեռուստաընկերությունների հաղորդումների համաձայն, միայն Կուլուի շրջանում զոհվածների թիվը հասել է 200-ի: ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը մանրամասնում է, որ զոհերի մեծ մասը Բիհարի նահանգից, ինչպես նաեւ հարեւան Նեպալից եկած բանվորներ են, որոնք աշխատում էին կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանի շինարարությունում: Ջրհեղեղը տեղի է ունեցել ուշ գիշերին, երբ մարդիկ քնած են եղել: Հաղորդվում է, որ նահանգի ոստիկանությունը փրկարարների եւ բուժաշխատողների հետ շարունակում է աշխատել տարերային աղետի վայրում, որպեսզի ճշգրտի զոհերի վերջնական թիվը եւ ավերածությունների ծավալները: Նախնական տվյալների համաձայն, երեք միլիոն մարդ մնացել է անօթեւան:

Պ. Ք.

Վրաստանի ՆԳՆ-ն բացահայտել է երեխաների առեւտրով զբաղվող խոշոր ցանց

ԹԲԻԼԻՍԻ, 17 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅՍՆ ՏՍՊՍՆ: Վրաստանի ՆԳՆ աշխատակիցները չորեքշաբթի Կասպիի շրջանում ձերբակալել են երեխաների առուծախին մեղսակից հանցախումբ: Ինչպես «Ռոսբալտին» հայտնել են ՆԳՆ-ում, կանխարգելվել է նաեւ երկու նորածինների վաճառքը, որ հայտնաբերվել են Կուրաշվիլիների ընտանիքում՝ նրանց տունը վերածվել էր յուրատեսակ փոխաբերման կետի՝ երեխաներին անլեգալ արտասահման ուղարկելու համար: Ոստիկանության տվյալներով, դա սոսկ երեխաների առուծախի հանցավոր ցանցի մի մասն է, որին մասնակից են վրացի բժիշկներ: Պատշաճ կերպով երեխաների վաճառքի առաջին դեպքը Վրաստանում գրանցվել է երկու տարի առաջ. այդ բիզնեսով երկրում զբաղվում էր Կանադայի քաղաքացի Օլգա Գորելիկը: Վրացական դատարանից նրան չփրկեց անգամ կանադական իշխանությունների միջամտությունը: Ներկայումս նա եւ նրա հանցակիցները շարունակում են պատիժը կրել վրացական բանտերում:

Մոսկվայում ադրբեջանցիները սպանել են ադրբեջանցիների

ՄՈՍԿՎԱ, 17 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅՍՆ ՏՍՊՍՆ: Չորեքշաբթի ուշ երեկոյան Մոսկվայի Չերիզովսկի շուկայի մոտ սպանվել են երկու ադրբեջանցիներ: Ինչպես հաղորդել է «Թուրան» գործակալությունը՝ վկայակոչելով Ռուսաստանում Ադրբեջանի դեսպանության հյուպատոսական բաժնի երրորդ քարտուղար Ռաշադ Սամեդովին, սպանությունը տեղի է ունեցել չորս ադրբեջանցիների միջեւ ծագած տարաձայնությունների հողի վրա: Այսպես, շուկայում աշխատող Իսման Մահերրամովը եւ Սեյմուր Սայարը վիճաբանել են երկու ուրիշ ադրբեջանցիների հետ, որոնց անունները դեռ պարզված չեն: Վեճը, որի պատճառը հայտնի չէ, ծագել է շուկայում, իսկ հետո շարունակվել մետրոյի «Չերիզովսկայա» կայարանի մոտ: Եկվորներից մեկը հանել է հրազային զենքը եւ չորս կրակոց արձակել երկու վաճառողների գլխին եւ կրծքավանդակին, իսկ հետո հեռացել հանցանքի վայրից: Տուժածները մահացել են հիվանդանոցում, գիտակցության չգալով: Ըստ ականատեսների, եկածները եւս եղել են ադրբեջանցիներ, սակայն ոչ ոք նրանց չի ճանաչում: Փաստի առթիվ Մոսկվայի Արեւելյան օկրուգի դատախազությունը քրեական գործ է հարուցել, կատարվում է քննություն: Հանցագործները ձերբակալված չեն:

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍԻ ԳՐԱՌՈՒՄՆԵՐԻՑ

Իմ վիզայի դիմումը մերժվել է: Ի՞նչ կարող եմ անել

Այսպիսով Ձեր ԱՄՆ մուտքի վիզայի դիմումը մերժվել է: Դուք համբերատար կանգնել եք հերթում եւ սպասել Ձեր հերթին, բերել եք բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, հարցազրույցի ժամանակ ճշտորեն պատասխանել հյուպատոսի բոլոր հարցերին: Չնայած այս ամենին հյուպատոսը՝ մերժեց Ձեզ վիզա տալ: Ինչո՞ւ այդպես եղավ: Ինչպե՞ս կարող եք մեծացնել վիզա ստանալու հավանականությունը, եթե կրկին դիմեք վիզայի համար:

Մերժման մեկնաբանումը:

Հասկանալու համար Ձեր մերժման պատճառները, նախապես պետք է իմանալ, որ վիզա ստանալու համար հյուպատոսին համոզիչ փաստարկներ պետք է ներկայացվեն: Համաձայն ԱՄՆ ներգաղթի եւ քաղաքացիության մասին օրենքի 214 (b) հոդվածի՝ հյուպատոսը պարտավոր է յուրաքանչյուր վիզայի դիմորդի դիտել որպես ԱՄՆ ներգաղթելու կամ ԱՄՆ-ում աշխատանք փնտրելու ցանկություն ունեցող անձի: Այս փաստը հաշվի առնելով՝ յուրաքանչյուր դիմորդ պետք է ցույց տա իր սոցիալ-տնտեսական եւ մասնագիտական ամուր կապերն իր հայրենիքի հետ: Այլ կերպ ասած՝ եթե ցանկություն ունեք մեկնելու ԱՄՆ կարճաժամկետ գործնական կամ հանգստի նպատակով, պետք է հյուպատոսին համոզիչ փաստարկներ ներկայացնեք՝ ապացուցելու համար, որ դուք մտադրված չեք մշտապես բնակվել ԱՄՆ-ում: Վերջնական որոշում կայացնելու համար հյուպատոսը հաշվի է առնում բազմաթիվ հանգամանքներ:

Առաջին, հյուպատոսը փորձում է տեսնել Ձեր կապը հայրենի երկրի հետ, ինչը կապահովի Ձեր վերադարձը: Դրա բաղկացուցիչ մաս կարող են լինել ընտանիքը, Հայաստանում մշտական բնակության փաստը, կայուն աշխատանքը: Որքան շատ այսպիսի փաստեր ներկայացնեք, այնքան լավ: Երկրորդ, պետք է ապացուցեք հյուպատոսին, որ դուք ի վիճակի եք հոգալու Ձեր ԱՄՆ մեկնելու եւ վերադարձի բոլոր ծախսերը: ԱՄՆ ճամփորդությունները բավականին թանկ են, եւ յուրաքանչյուր ոք պետք է վստահ լինի, որ ճամփորդության ժամանակ իր գումարը չի սպառվի, եւ որ Հայաստան վերադառնալուց հետո ինքը դեռեւս ի վիճակի կլինի հոգալ իր եւ իր հարազատների ծախսերը: Երրորդ, հյուպատոսը պետք է հավատա՝ նա, որ դուք ԱՄՆ-ում գտնվելու եք նախապես հստակեցված ժամանակահատվածում: Ասելով, թե ցանկանում եք այնտեղ մնալ ընդամենը մի քանի ամիս, հստակ ձեւակերպում չէ: Հյուպատոսի համար ավելի պարզ կլինի պատկերացնել Ձեր վերադարձը Հայաստան, եթե դուք ասեք Ձեր ԱՄՆ-ում գտնվելու ճշգրիտ ժամանակահատվածը:

Ի՞նչ կարող եք անել մերժումից հետո:

Եթե դուք չեք կարողացել առաջացուցել հյուպատոսին, որ դուք մտադրված չեք ներգաղթել ԱՄՆ, նա ստիպված պետք է մերժի Ձեր դիմումը: Դա չի նշանակում, որ դուք մշտապես զրկվում եք ԱՄՆ մուտք գործելու հնարավորությունից: Դուք կարող եք կրկին դիմել վիզայի համար, երբ ցանկանում եք, սակայն, ամենայն հավանականությամբ, Ձեր դիմումը նորից կմերժվի, քանի դեռ չեք ներկայացնի նոր փաստեր, որոնք ցույց կտան, որ Դուք ցանկություն չունեք ներգաղթել ԱՄՆ, կամ Ձեր կյանքում տեղի չեն ունեցել զգալի փոփոխություններ (օրինակ՝ նոր աշխատանքի եք անցել, նոր տուն եք գնել եւ այլն), որոնք կհավաստեն, որ Դուք ցանկություն չունեք ներգաղթել:

Ընդհանրապես, որքան շատ փաստեր ներկայացնեք, որ մտադրված չեք ներգաղթել ԱՄՆ, այնքան լավ: Ձեր իրավունքն է ներկայացնել որոշակի փաստաթղթեր կամ ուղղակի բանավոր ներկայացնել իրավիճակը հարցազրույցի ժամանակ: Ինքներդ պետք է որոշեք որ տարբերակն է առավելագույնս հիմնավորում Ձեր պահանջը: Եթե չեք կարող ներկայացնել Ձեր իրավիճակը նկարագրող փաստեր (օրինակ՝ գործազուրկ եք, ամուսնացած չեք, առկա չէ Հայաստանում մշտական բնակության փաստը), ավելի լավ է ուղղակի սպասել մինչեւ իրավիճակի փոփոխվելը: Ոչ մի դեպքում պետք չէ արհեստական ճանապարհով ստեղծել նման փաստեր: Ոչ ներգաղթային վիզայի բազմաթիվ դիմորդներ փորձում են կեղծ ամուսնությունների, աշխատանքի մասին կեղծ փաստաթղթերի միջոցով վիզաներ ստանալ: Եթե դիմորդի խաբեությունը բացահայտվում է, ապա հնարավոր է, որ նա մշտապես զրկվի ԱՄՆ մուտքի հնարավորությունից: Ավելին՝ նա վտանգում է իր ընտանիքի անդամների ԱՄՆ մեկնելու հնարավորությունը:

Եթե Ձեր մերժման կապակցությամբ կամ ԱՄՆ մեկնելու հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել ամերիկյան դեսպանատան հյուպատոսական բաժին 52-16-11 կամ 52-46-61 (ներքին՝ 4665) հեռախոսահամարներով:

ԿՈՐԵԼ Է

Մաքանյան Արթուրի դպրոցական ատեստատը՝ սերիա 123963, որը նրան շնորհվել է Չկալովի անվան թիվ 30 դպրոցն ավարտելիս: Համարել անվավեր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՏԵՂԵԿԱՏՈՒ ԵՎ ԴԵՊԻՆ ԷՋԵՐ

Գործարար տեղեկատվություն գործարարների համար

ՏԵՂԵԿ տեղեկատվական հասցեագրություն Երեւան-10, Փանիսյան Բուլվարի 1/3, 7-րդ հարկ Հեռ. 562635, 563505, E-mail: info@spyur.am

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կապանի քաղաքապետարանը 22.08.2003 թ. կազմակերպում է մրցույթ Կապանի Գ. Նժդեհի երկրորդ նրբանցքում 600,0 քմ հողատարածք գյուղատնտեսական նպատակներով օգտագործման տրամադրելու համար: Մրցույթին մասնակցել ցանկացողները մինչեւ 19.08.2003 թ. պետք է ներկայացնեն մրցույթի մասնակցության հայտ, ընկերության (անձը հաստատող) փաստաթղթեր, մասնակցության համար վճարի անդորրագիր:

Տեղեկությունների համար դիմել քաղաքապետարան, մրցութային հանձնաժողովին, հեռ. 65852.

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

«ԵՐԿԻՐ ՆԱԻՐԻ» զբոսաշրջային ընկերությունը հրավիրում է

- Ամբերդ, աստղերի դիտում, Քարի լիճ՝ հուլիսի 12-13
- Տեղյանական օրեր Ջավախքում՝ Ախալքալաքի բերդ, Թմկաբերդ, Փարվանա լիճ, Գանձա՝ հուլիսի 18-20
- Վարդավառի տոնախմբություն՝ հուլիսի 27
- Արցախ՝ Ստեփանակերտ, Շուշի, Գանձասար՝ օգոստ. 1-3

ԱՆՎՃԱՐ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեր թերթում անվճար հայտարարություններ հրապարակելու ցանկություն ունեցողներին խնդրում ենք դրանք գրավոր ներկայացնել խմբագրության տնօրենությանը: Հասցեն՝ Հանրապետության 47:

- Վաճառվում է Ս. Խորենացու 3-րդ նրբ., տուն 17, բնակելի 2 սենյակ, 33,2 քմ, օժանդակ կառույց՝ 32 քմ, առանց միջնորդի: Գինը՝ պայմանագրային: Հեռ.՝ 63-88-93:
- Գնեմ PETROF 115 մոդելի դաշնամուր: Հեռ.՝ 533051:
- Տրվում է վարձով 2 սենյականոց շեղ նորոգված եւ կահավորված բնակարան Կոմիտաս թաղամասում: Վարձը՝ 180 դոլար: Հեռ.՝ 23-35-04:
- Վաճառվում է հողատարածք (հարմար է արտադրության համար) 1200 քմ, հասցեն՝ Նորագավիթ, 4-րդ փ. 30 տուն: Տուն՝ 4 սենյ., 1 հարկում, լողավազանով, ծառերով, ավտոնկարով: 54-21-94, 42-68-98 (Էդիկ)
- Վաճառվում է նոր տուփայով «Դայեա»

Notice of call for proposals

Call for proposals for the European Initiative for Democracy and Human Rights (EIDHR), Micro-Projects programme

Publication reference: **DELARM/EIDHR/MICRO/2003**

The European Commission is seeking proposals for microprojects in Armenia with financial assistance from the European Initiative for Democracy and Human Rights (EIDHR) programme of the European Communities. ***A total of €500,000 will be made available in grants to Armenian non-profit making NGOs.***

The general objective of this programme is to respond rapidly to requests from Armenian NGOs that are designed to promote and protect human rights and democratisation as well as initiatives aimed at conflict prevention and resolution. Proposals for microprojects should be in the following priority areas:

A. Support for the fight against torture and impunity and the promotion and protection of human rights:

-Support for education, training and awareness-raising in the area of human rights

B. Support to strengthen democratisation, good governance and the rule of law

- Promoting and strengthening the rule of law and the independence of the judiciary
- Promoting good governance, particularly by supporting administrative accountability and the prevention and combating of corruption
- Human-rights and democratisation activities aiming at preventing, resolving and dealing with the consequences of conflict, including supporting measures facilitating the peaceful conciliation of group interests

Applicants may apply singly or as part of a consortium.

Grants may cover up to a maximum of 90% of project costs. Grants will finance projects with activities lasting up to 12 months.

Grants range from €20,000 to €50,000.

Applicants must be non-profit-making NGOs with their headquarters in Armenia, or a local independent division of an NGO with its headquarters in another country.

The full Guidelines for Applicants are available for consultation at the European Commission Delegation to Georgia and Armenia, Branch Office in Yerevan, 13 Mashtots ave., Yerevan 375010, telephone (+3741) 53 02 41; 53 18 99, fax (+3741) 53 39 24, email eu@arminco.com and on the following internet site:http://europa.eu.int/comm/europeaid/projects/eidhr/cfp_en.htm.

The deadline for submission of proposals is Friday, **19 September 2003 at 16.00 Yerevan time.**

Any questions regarding this Call for Proposals, clearly indicating the reference number, should be sent by e-mail to eu@arminco.com . All applicants are encouraged to consult the above Internet Web page regularly before the deadline for applications since the Commission will publish the most frequently asked questions and the corresponding replies.

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա Գրանցման թիվ 65. Դասիչ 69150. Տպաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության՝ 17. 7. 2003 Գինը՝ 100 դրամ